

Այունյաց երկիր

www.syuniacyerkir.am

...Եվ ավերք, եւ
նեռ գուժելով՝
թռչում է հողմն
Ավիլուն: -
ԵՂԻՇԵ ԶԱՐԵՆՅԱՆ



Մեղրեցիները մրահոգված են

ՀԻՄՆԱԽՆԴԻՐ

Մեղրի քաղաքի մոտ 70 բնակիչ 2012թ. դեկտեմբերի 27-ին դիմում է հղել համայնքի տեղական ինքնակառավարման մարմիններին: Դիմումի մեջ մասնավորապես ասված է. «Վերջերս մեզ հայտնի դարձավ, որ Սյունիքի մարզի Լիճքի եւ Վարդանիձորի գյուղապետարաններում տեղի են ունեցել հասարակական լուսններ՝ այդ համայնքների տարածքում գտնվող պղնձի եւ մոլիբդենի հանքավայրերի շահագործման խնդրի շուրջ: Այդ իրողությունը մեզ ավելի քան անհանգստացրել է, թեկուզե այն պատճառով, որ տնտեսվարող սուբյեկտները խուսափել են նման լուսններ կազմակերպել նշված հանքավայրերին մոտ գտնվող Մեղրի քաղաքում եւ ազդակիր մյուս համայնքներում:

Ինչպես գիտեք, Մեղրու տարածաշրջանը բնապահպանական լուրջ մարտահրավերների առջեւ է կանգնած: Հայտնի է նաեւ, որ տարածաշրջանի հիմնական հանքավայրերը դժբախտաբար գտնվում են բնակավայրերից զգալիորեն բարձր միջերկրում, որտեղ ջրագոյացման եւ ջրաբաշխման համակարգերն ու ջրահավաք ավազաններն են՝ ինչպես խմելու, այնպես էլ՝ ոռոգման ջրի: Արդեն իսկ գործող հանքերը (Տերտեղասար, Լիճքավազ, Ագարակի պղնձամոլիբդենային) տարածաշրջանում աղետալի իրավիճակ են ստեղծել: Եվ ընդհանրապես՝ պետք է հաշվի առնել, որ Մեղրու շրջանի բոլոր հանքավայրերում որպես ուղեկցող էլեմենտ հանդես են գալիս ուրանը եւ ֆորոնը: Դրանց պարունակությունը հատկապես մեծ է Լիճքի, Տաշտունի, Լիճքավազ-Թեյի հանքավայրերում: Բացի նշված եւ ներկայումս շահագործվող հանքավայրերից, արտոնագրեր են տրված՝ բազմաթիվ նոր հանքավայրերի ուսումնասիրության եւ շահագործման համար: Փաստորեն տարածքը կանգնած է լուրջ փորձության առջեւ: Ավելորդ է հիշեցնել, որ Մեղրի գետը, սկիզբ առնելով մոտ 3100մ բարձրությունից, խիստ մեծ թեքությամբ հասնում է ծովի մակերեսին 500-600 մետր բարձրության վրա գտնվող Մեղրու տարածք՝ առանց որեւէ խոչընդոտի իր հետ բերելով հագարավոր տարիներ խիստ թունավոր հատկությունները չկորցնող նյութեր՝ վարակելով բնակավայրերի հողն ու ջուրը: Միաժամանակ հանքերից եւ պղնձաբերներից բարձրացող փոշին սփռելով-տարածելով համայնքի ողջ տարածքի վրա՝ ծանր մետաղներով, ռադիոակտիվ եւ այլ նյութերով թունավորում է այն՝ անհնար դարձնելով այստեղ ապրելը:

Տեսանելի է, որ գործարար աշխարհը՝ տիրապետելով ժամանակակից գերհզոր տեխնոլոգիաների, չունենալով պատշաճ խիղճ եւ պատասխանատվություն, անձնական շահը գերադասելով ազգային ու պետական շահից, քանդելով մեր սարերն ու լեռները՝ երկրամասը դարձնում է մարդու կյանքի համար անպիտանի: Նույնիսկ այսօր, երբ դեռես հանքարդյունաբերությունն իր կանխատեսելի ծավալներից շատ հեռու է, արդեն անգին աչքով, առանց հետազոտությունների տեսանելի է, որ տարածքում համատարած է աղետամոլային, հիպերտոնիկ, շնչուղիներն եւ այլ հիվանդությունների աճը: Մարդիկ դժգոհում են

Շարունակությունը՝ էջ 3

Արտասավոր իրավիճակ. թեկնածուների առաքուլություն եւ այլընտրանքի բացակայություն

ՓԵՏՐՎԱՐԻ 18-ԻՆ՝ ՀՀ ՆԱԽԱԳԱՀԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆ

Հունվարի 14-ին ավարտվեց Հայաստանի Հանրապետության նախագահի թեկնածուների գրանցումը, որը սկսվել էր հունվարի 4-ին: ՀՀ նախագահի թեկնածու են գրանցվել՝ ՀՀ գործող նախագահ Սերժ Սարգսյանը (առաջադրումը՝ ՀՀ-ի կողմից), ԲաժՖի Հովհաննիսյանը (ինքնառաջադրում), Հրանտ Բագրատյանը («Ազատություն» կուսակցության կողմից), Պարույր Հայրիկյանը (ինքնառաջադրում), Արման Մելիքյանը (ինքնառաջադրում), Անդրիաս Դուկա-

սյանը (ինքնառաջադրում), Վարդան Սեդրակյանը (ինքնառաջադրում), Արամ Հարությունյանը (ինքնառաջադրում):

Հունվարի 21-ից սկսում է նախընտրական քարոզարշավը, որը կշարունակվի մինչեւ փետրվարի 16-ի ժամը 24-ը:

Մինչ այդ՝ ս.թ. հունվարի 4-ին կազմավորվել են ՀՀ նախագահի ընտրության ընտրական տեղամասերը: Սյունիքի մարզը ընդգրկող երկու ընտրատարածքում ձեւավորվել է 153 ընտրատեղամաս, այդ թվում՝ N37-ում՝ 77, N38-ում՝ 76: Սահմանվել են նաեւ տեղամասային կենտրոններն ու դրանց հասցեները: Տեղամասային ընտրական հանձնաժողովների առաջին նիստը կկա-

յան 2013թ. հունվարի 27-ին ժամը 12-ին: Մինչեւ հունվարի 9-ը՝ տեղամասային կենտրոններում՝ բոլորի համար տեսանելի տեղում, փակցվել են ընտրողների ցուցակները: Անճշտություններ հայտնաբերելու դեպքում քաղաքացիները կարող են դիմել ՀՀ ռազմական անձնագրային եւ վիզաների վարչություն կամ այն անձնագրային բաժանմունք, որտեղ հաշվառված են: Փոփոխությունները կկատարվեն հինգ օրվա ընթացքում, բայց քվեարկության օրվանից ոչ ուշ, քան չորս օր առաջ: Ըստ նախնական ցուցակի՝ Սյունիքի մարզի ընտրողների թիվը 105805 է, այդ թվում՝ N37 ընտրատարածքում՝ 55396, N38-ում՝ 50409: **Շարունակությունը՝ էջ 3**

Նշվեց մոտոհրաձգային բրիգադի 20-րդ փարեդարձը

ՀՈՐԵԼՅԱՆ

1993-ի հունվարին ստեղծվեց 97-րդ առանձին մոտոհրաձգային բրիգադը, որ կոչված էր պաշտպանելու Մեղրու եւ Կապանի շրջանները հակառակորդի ոտնձգություններից: Նրա կազմի մեջ ընդգրկվեցին Կապանի շրջանում գործող ռազմական բոլոր ստորաբաժանումներն ու ջոկատները: Կազմավորման օրվանից 97-րդ մոտոհրաձգայինը մարտական գործողություններ էր վարում Կապանի սահմանամերձ գոտում: 1993 թվականի սեպտեմբեր-հոկտեմբերին բրիգադի հրամանատարության առջեւ խնդիր դրվեց համագործակցել Լեռնային Ղարաբաղի պաշտպանական ուժերի հետ, մասնակցել Կուբաթլիի, Ջանգելանի, Մինջեւանի ազատագրման մարտերին, ինչը եւ հաջողությամբ իրականացվեց: Ոչ միայն ազատագրվեցին Հայաստանի պատմական տարածքները, այլեւ ապահովվեց Սյունիքի անվտանգությունը:

1994-ի հունվարը ծանր փորձություն էր բրիգադի համար. ադրբեջանցիներն անցան լայնածավալ հակահրաձգական՝ օգտագործելով ռազ-

մական տեխնիկայի իրենց գերազանցությունը (օդուժ եւ հրետանային հեռահար միջոցներ): Արաքս գետ-Յորդանի գ ռազմաճակատային մոտ 20 կմ երկարությամբ զծի պաշտպանությունն իրականացնում էր 97-րդ առանձին մոտոհրաձգային բրիգադը՝ հաջողությամբ կասեցնելով հակառակորդի առաջխաղացման ամեն մի փորձ: Մինչ տարածաշրջանում հրադադար հաստատվելը բրիգադը հաջողությամբ իրականացրեց մարտական առաջադրանքները, իսկ 2002-ի սեպտեմբերին վերակազմավորվեց, եւ նրա իրավահաջորդ 14-րդ առանձին մոտոհրաձգային գունդը տեղափոխվեց մշտական տեղակայման վայր՝ Կապան: Բրիգադի կազմավորման 15-րդ տարեդարձի առթիվ նրա իրավահաջորդ 14-րդ առանձին մոտոհրաձգային գունդն արժանացավ «Մարտական խաչ»՝ 1-ին աստիճանի շքանշանի:

Հունվարի 12-ին հանդիսավոր պայմաններում նշվեց բրիգադի կազմավորման 20-րդ տարեդարձը: Տոնական տրամադրություն էր գնդի շարային հրապարակում, որտեղ հանդիսավոր տողանի էին կանգնել սպաներն ու զինվորները, իսկ հիշարժան արարողությանը մասնակ-



ցում էին բրիգադի հիմնադիր հրամանատար, գեներալ-լեյտենանտ Միքայել Գրիգորյանը, ՀՀ պաշտպանության նախարարի խորհրդական, գեներալ-մայոր Մուրադ Սարգսյանը, Լեռնային Ղարաբաղի պաշտպանության բանակի հրամանատար Մուրադ Սարգսյանը: **Շարունակությունը՝ էջ 3**

ԴԱՎԻԹ ԳԱՍՊԱՐՅԱՆ. «Ցավո՛ք, ամեն մի ժամանակ ձգտում է Չարենցին հարմարեցնել իր պարկերացումներին»

«ԳԻՐՔ ՄԱՍԳՈՐԴԱՅԻ»
ՃԱԿԱՏԱԳԻՐԸ

Չարենցյան փորձա կապակցությամբ՝ 2012-ի նոյեմբերի 28-ին Գորիսի պետական ջրէջում փերի ունեցավ գրական ցերեկույթ՝ նվիրված բանաստեղծի ծննդյան 115-ամյակին, մահվան 75-րդ փարեկցին եւ բանաստեղծական գործունեության դարեդարձին: Միջոցառմանը հրավիրված էր եւ Չարենց անհատականության, պոետի, նորարարի մասին ծավալուն դասախոսությամբ (մութ երկու ժամ) հանդես եկավ գրականագետ, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ՀՀ արվեստի վաստակավոր գործիչ, «Հայոց լեզու եւ գրականություն» գիտամեթոդական հանդեսի գլխավոր խմբագիր Դավիթ Գասպարյանը: Գրական ցերեկույթի ավարտից հետո «Սյունյաց երկիրը» մի ջահի հարց ուղղեց անվանի գրականագետին: Մեզ, նախառաջ, հետաքրքրում էր Չարենցի անփոք ժառանգության մի մասը բովանդակող, Դավիթ Գասպարյանի կազմած «Գիրք մնացորդաց» ժողովածուի ճակատագիրը, ինչի վերաբերյալ էլ սկսեցինք զրույցը:



Դավիթ Գասպարյանի կազմած «Գիրք մնացորդաց» ժողովածուի ճակատագիրը, ինչի վերաբերյալ էլ սկսեցինք զրույցը:

— Ձեր վերջերս հրատարակած գիրքը՝ «Գիրք մնացորդաց», արգել-

տեսավ «Անտիպ եւ չհավաքված երկեր» վերնագրով, երկրորդը՝ 1996 թ. «Նորահայտ էջեր» վերնագրով: Այս վերջին ժողովածուն ես եմ կազմել: Հիմա լույս է տեսել երրորդ գիրքը: Վերջին տարիներին, նկատի ունեն 1998 թվականից այս կողմ, ամերիկացի մի գրական դեմք՝ Չեյնս Ռասել անունով, չարենցյան անտիպներ էր հրատարակում: Մանրակրկիտ հետեւում էի այդ հրատարակումներին, եւ զգում էի, որ դրանցում, անշուշտ, սխալներ, վրիպակներ, անճշտություններ կան: Բայց չարենցյան այդ ձեռագրերը ձեռքս տակ չկային, որ տպագրվածը համեմատեի ինքնագրի հետ: Եվ, ի վերջո, Չեյնս Ռասելն իր հրատարակումներից մեկուն բացահայտեց իրողությունը՝ ասելով, թե 1998 թ. երեւանում մասնակցել է մի գիտա-ժողովի, իրեն է նոտեցել Գեւորգ Էմինի որդին՝ Արտաշես Էմինը, հրավիրել է իրենց տուն, իր առջեւ դրել Չարենցի ձեռագրերը: Էմինի կինը, ով ներկա է եղել խոսակցությանը, որդուն ասել է, որ սխալ է վարվում, այդ ձեռագրերը պիտի մնան Հայաստանում: Չարենցյանը 1983 թ. լույս

Լուրեր

Քաջարանի գյուղապետ Ռաֆիկ Աբայանը նամակ է հղել «Տաշիր» ընկերությունների խմբի նախագահ Սամվել Կարապետյանին, որում մասնավորապես ասված է. «Սահմանային Քաջարան գյուղի բնակչության անուսնից խնդրում ենք Ձեր օգնությունը՝ Քաջարան քաղաքից մինչեւ Քաջարան գյուղ ձգվող մոտ 2 կմ երկարությամբ ճանապարհը հիմնանորոգելու համար: Մենք տեղյակ ենք Ձեր կողմից կատարվող հայրենասիրական բազում ձեռնարկումներին: Վստահ ենք նաեւ, որ Ձեզ համար միեւնույն չէ սահմանային գյուղերի իրավիճակը: Հենց այդ համոզմամբ էլ դիմում ենք Ձեզ՝ ակնկալելով դրական վերաբերմունք: Նախիջեւանի սահմանից 4-5 կմ հեռավորության վրա գտնվող մեր գյուղում տարիներ շարունակ ոչինչ չի արվել համայնքի սոցիալ-տնտեսական զարգացման ուղղությամբ: Այդ անտարբերությունը բխում է «Չարենցյանի պոեզիայի վերածնունդի կոմիտեի» ՓԲ ընկերության գյուղի տարածքը հանքավայր դարձնելու ապագային հավակնությունից, ինչին դեմ են համայնքի բնակիչները: Ավելին, համայնքի բնակիչները վճռական են իրենց դիրքորոշման մեջ՝ ընդմիշտ բնակվելու իրենց նախնիներից ժառանգություն ստացած բնօրրանում: Ձեր կողմից ցուցաբերվող օգնությունը, հավատարմությունը, մեծ քայլ կլինի այդ գյուղի պահպանման ու վարկա օրվա հանդեպ մարդկանց հավատի ամրապնդման գործում»:

Ճիշտ է, որ Սյունիքում Իրանի 5000 անասուն է արածելու

ՀՀ տարածքային կառավարման նախարար, փոխվարչապետ Արմեն Գեւորգյանին եւ ՀՀ գյուղատնտեսության նախարար Սերգո Կարապետյանին

ՀԱՐՑՈՒՄ

Սույն թվականի դեկտեմբերի 24-ին www.mtk.am վերլուծական ինտերնետային կայքում հրատարակվել է «Հայաստանը եւ Իրանը գյուղատնտեսության ոլորտում կատարագրեն նոր համաձայնագիր» վերնագրով նյութ, որում ասվում է, որ այն կատարագրվի Իրանի Արեւելյան Ադրբեջան նահանգի ղեկավարի՝ Սյունիքի մարզ կատարելիք այցի ժամանակ: Այդ մասին, ինչպես հաղորդում է IRNA տեղեկատվական գործակալությունը, ասել է Իրանի գյուղատնտեսության նախարարության Արեւելյան Ադրբեջան նահանգի հարցերով վարչության ղեկավար Մասուդ Մոհամմադիանը: Նոր համաձայնագրի համապատասխան՝ Սյունիքի մարզը հինգ տարով վարձակալությամբ արտավայր կտրամադրի Արեւելյան Ադրբեջանից հինգ հազար գլուխ տավարի համար, ասել է Մոհամմադիանը: «Ըստ համաձայնագրի՝ արտավայրը վարձով կտրամադրվի Սյունիքի գյուղատնտեսական տեխնիկա, որն արտադրվել է այդ նահանգում», – ասել է Մոհամմադիանը: Նրա խոսքով՝ Իրանը Հայաստանում կկառուցի մասնաբերի կոմբինատ եւ անասնակերի արտադրության կենտրոն՝ Միսիանի շրջանում, որտեղ իրանցի եւ հայ գործարարները կզբաղվեն համատեղ գործունեությամբ: Իսկ հարցի շուրջ կայքերից մեկին իր բացատրությունն է տվել Սյունիքի մարզպետ Սուրիկ Խաչատրյանը. «Որ ստորագրենք՝ կի-



մանաք, դեռ չենք ստորագրել»: Սեր եւ հանրության լայն շերտի մոտ առաջացել է դժգոհություն եւ մտավախություն, որ սա կարող է իսկապես իրականություն լինել, քանի որ մենք մեր իրականությունից չենք հեռանում, եթե ՀՀ կառավարությունը պատրաստ է որոշում ընդունել Քաջարան գյուղը տարահանելու վերաբերյալ, ապա այս հարցին անտարակույս առանց հետեւանքների մասին մտածելու ու կշռադատելու, կարող է լուծվում տալ: Այժմ, որպես շահագրգիռ եւ մտահոգ հանրություն, դիմում ենք Ձեզ՝ «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի համաձայն ստույգ եւ հավաստի տեղեկատվություն ստանալու ակնկալիքով, մասնավորապես՝ Դուք, որպես պետական լիազոր մարմինների պաշտոնատար անձինք, պաշտոնապես հերքեք կամ հաստատեք այս տեղեկատվությունը: Եթե այն համա-



պատասխանում է իրականությանը, ապա խնդրում ենք տրամադրել այդ հավաստող փաստաթղթերի պատճենները եւ անհապաղ ապահովել հասարակական լուծումներ: Միեւնույն ժամանակ, կոչ ենք անում Ձեզ ձեռնպահ մնալ Հայաստանի Հանրապետության տարածքի վերաբերյալ ցանկացած որոշում կայացնելուց առանց ժողովրդի կարծիքը հաշվի առնելու եւ առանց նրա գիտության: Հորդորում ենք՝ առանց հանրության կարծիքը հաշվի առնելու որեւէ համաձայնագիր կամ պայմանագիր չկնքել: Ակնկալում ենք սեղմ ժամկետում ստանալ Ձեր պաշտոնական եւ հրատարակային արձագանքը: Հուսով ենք, որ այն կլինի ի շահ հայ ժողովրդի եւ Հայաստանի Հանրապետության»:

«Թռչկան» քաղաքացիական նախաձեռնություն
26 դեկտեմբերի 2012թ.

ԱՐՄԵՆ ԳԵՎՈՐԳՅԱՆ. «Սյունիքի արտավայրերն Իրանին չեն տրվել»

Այս պահի դրությամբ ՀՀ Սյունիքի մարզի արտավայրերն Իրանին վարձակալությամբ տրամադրելու վերաբերյալ որեւէ պաշտոնական փաստաթուղթ գոյություն չունի: Այդ մասին ղեկավարների 28-ին լրագրողների հետ հանդիպման ժամանակ ասաց ՀՀ տարածքային կառավարման նախարար Արմեն Գեւորգյանը:

Նշենք, որ մամուլում լուրեր են հրատարակվել այն մասին, որ Սյունիքի մարզից արտավայրերը 5 տարով կհատկացվեն իրանցի ֆերմերներին՝ 5000 գլուխ անասուն պահելու համար: Տեղեկատվության աղբյուրը իրանական IRNA գործակալությունն է: Հաղորդագրության համաձայն՝ Իրանի Արեւելյան Ադրբեջանի նահանգի ղեկավարի Սյունիքի մարզ կատարելիք այցի ժամանակ պետք է համաձայնագիր ստորագրվի Սյունիքի մարզպետի հետ: Արտավայրերի դիմաց Իրանը Հայաստանին գյուղտեխնիկա կտրամադրի եւ մի վերամշակման արտադրամաս կհիմնի: Ըստ Արմեն Գեւորգյանի՝ հնարավոր է, մասնա գաղափարներ կան, այդպիսիք միշտ էլ ծնվում են առիթից առիթ՝ տարբեր մարզերի վերաբերյալ տարբեր ներդրողներ որոշակի ծրագրեր են առաջ քաշում: Սակայն կոնկրետ Սյունիքի մարզի հետ կապված որեւէ փաստաթուղթ չի շրջանառվում: «Բոլոր արտավայրերը ՀՀ-ին պետք են եւ ամեն ինչ ամելու ենք դրանք մաքսիմում օգտագործելու համար», – ասաց Ա. Գեւորգյանը:

Նշվեց մուրհիրաձգային բրիգադի 20-րդ տարեդարձը

ՀՈՐԵՔՆԱՍ

Սկզբը՝ էջ 1

Մատարի տեղակալ, գեներալ-մայոր Անդրանիկ Մակարյանը, զինվորական եւ քաղաքացիական պաշտոնական այլ այրեր:

Բրիգադի անցած մարտական ուղու մասին ընդգրկուն զեկուցումով հանդես եկավ N14 մոտոհրաձգային գնդի հրամանատար, զնդապետ Կարեն Սերոբյանը, ով հրնթացս երախտազիտություն հայտնեց բրիգադը ղեկավարած հրամանատարներին՝ գեներալ-լեյտենանտ Միքայել Գրիգորյան, զնդապետ Կարեն Պարսադանյան (այժմ՝ հոգեհիշատակ), գեներալ-լեյտենանտ Քրիստափոր Իվանյան (այժմ՝ հոգեհիշատակ), զնդապետ Սեմյոն Հակոբյան (ներկայումս՝ գեներալ-մայոր), զնդապետ Մանվել Գրիգորյան (ներկայումս՝ գեներալ-լեյտենանտ), զնդապետ Արթուր Աղաբեկյան (ներկայումս՝ գեներալ-լեյտենանտ), զնդապետ Արթուր Գրիգորյան: Հորեքյանի առթիվ ներկայանեցին բարենադրանքի խոսքեր հղեցին 33 զինված ուժերի առաջին բանակային կորպուսի շտաբի պետ, զնդապետ Տիգրան Փարվանյանը, 14-րդ գնդի գումարտակի հրամանատարի տեղակալ, մայոր Իշխան Ավագյանը, նախկին «Քաղաքապետ» տրեստի տնօրեն Վլոդյա Աբրահամյանը, գեներալ-մայոր Մուրազ Սարգսյանը: Գեներալ-լեյտենանտ Միքայել Գրիգորյանն իր խոսքում համոզմունք հայտնեց, որ Աստված մի արասցե, եթե վերակառուցվող կառույցները, կոմսոմոլների 80 տոկոսն իր հետ շարք են կանգնելու՝ պաշտպանելու հայրենիքը: Նա նաեւ մի համեմատություն էլ արեց. մեր դաշտերում այնքան մետաղի բեկոր չկա, որքան շարքում կանգնած տղաների եւ աղջիկների մարմիններում: Չեկուցումներեց հետո գնդի հետախուզական վաշտի մարտիկները ցուցադրեցին մարտարվեստի իրենց հմտությունները:

Կապանի Նժդեհի հրապարակում զինվորական նվազախումբը տրմակուն մեղեդիներ էր հնչեցնում: Հավաքվել էին նախկին մարտական ընկերները, ողջագուրվում էին, հուշեր պատմում: Հետո շարք կազմած անցան հրապարակով: Հանդիսությունների հաջորդ կանգառը Բաղաբուրջի հուշահամալիրն էր, որտեղ հարգանքի տուրք մատուցվեց ոչ միայն մերօրյա ազատամարտում ընկածների, այլեւ երկրորդ աշխար-



Նախկին մարտական ընկերներն անցնում են Նժդեհի հրապարակով



Բաղաբուրջի հուշահամալիրում

համարտում զոհված կապանցի զինվորների հիշատակին: Օրվա երկրորդ կեսին Կապանի մշակույթի կենտրոնում տեղի ունեցավ բրիգադի 20-րդ տարեդարձին նվիրված համոզմունք կուսույթ:

Նախ ներկայացվեց բրիգադի անցած մարտական ուղին թվերի ու փաստերի լեզվով, ապա՝ հորեքյանի առթիվ բարենադրանքի խոսքեր հղեց Սյունիքի մարզպետ Սուրբիկ Սալասարյանը: «**Բրիգադը կազմավորվեց դժվարին պայմաններում, կարդային սպաների պակաս կար, այդ բացը լրացրեցին Կապանի երկ-**

րապահ կամավորները: Բրիգադը կազմավորվեց եւ անցավ փառահեղ ճանապարհ», – ասաց Սյունիքի մարզպետը: Գեներալ-մայոր Անդրանիկ Մակարյանն իր խոսքում հիշեցրեց սպարապետ Վազգեն Սարգսյանի խոսքը. «**Մեր բազմադարյան պատմության մեջ մենք չենք կորցրել հավատի ու խանդավառության մեր պաշարը:**» Ելույթներ ունեցան 97-րդ բրիգադի տանկային վաշտի հրամանատար, պահեստազորի մայոր Ռուբիկ Աբրահամյանը, Կապանի քաղաքապետ Աշոտ Հայրապետյանը, ով բրիգադի դասակի հրամա-

նատար է եղել, Կապանի զինկոմ, փոխգնդապետ Լեոնիդ Գրիգորյանը, Միքայել Գրիգորյանը, Մուրազ Սարգսյանը, ուրիշներ:

Հանդիսավոր միտի ալվարտին Արցախյան պատերազմի մասնակիցների մի ստվար խումբ պարզեատրվեց Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության եւ Լեռնային Ղարաբաղի պաշտպանության բանակի մեղալներով, պատվոգրերով, կրծքանշաններով:

ՎԱՅՐԱՍ ՕՐԲԵԼՅԱՆ

Լուրեր

Վ Իրանի Իսլամական Հանրապետության Արեւելյան Ատրպատականի նահանգապետ Ալի-Ռեզա Բեյգի հրավիրով 2013թ. հունվարի 14-ին, Երկօրյա այցով, Թավրիզ է այցելել Սյունիքի մարզի պատվիրակությունը՝ մարզպետ Սուրեն Սախարյանի գլխավորությամբ: Պատվիրակության կազմում գյուղատնտեսության ոլորտի մասնագետներ են, ֆերմերներ ու գյուղական համայնքների ղեկավարներ: Այցելությունը երկու մարզի միջեւ համագործակցության հետագա խորացման նպատակ ունի:

Հունվարի 8-ին «Հայփոստ» ՓԲԸ-ի Գործիքի մասնաճյուղում աշխատող Ալլա Հակոբյանի մասին ասեկոսներ էին տարածվել, ըստ որի վերջինս վերցրել է թոշակառուներին հասանելիք թոշակն ու անհետացել: Հարցի իսկությունը ճշտելու համար գրուցեցին «Հայփոստ» ՓԲԸ-ի Գործիքի մասնաճյուղի տնօրեն Արմեն Հայրապետյանի հետ, ով հերքեց մեծ տարածում գտած այդ լուրը եւ նշեց, որ Ալլա Հակոբյանը, անձնական խնդիրներից ելնելով, հունվարի 8-ին ներկայացրել է աշխատանքից ազատվելու վերաբերյալ դիմում, որի համաձայն էլ ազատվել է աշխատանքից: Ա.Հայրապետյանը հերքեց նաեւ տարածված խոսակցությունը, թե իբր Գործիքի կենսաթոշակառուները 2012թ. դեկտեմբեր ամսվա թոշակը չեն ստացել:

Հանրակրթական ուսումնական հաստատություններում փետրվարի 14-ից վերսկսվել է դասապրոցները: 1-ին եւ 2-րդ դասարանցիների համար ձմեռային արձակուրդը նախատեսված է 2012թ. դեկտեմբերի 29-ից մինչեւ 2013թ. հունվարի 27-ը ներառյալ: ՀՀ կրթության եւ գիտության նախարար Արմեն Աշոտյանը հիշեցնում է, որ դպրոցներում խստիվ արգելված է աշխատանքային տեսրերի, քարտեզների, ատլասների եւ այլ ուսումնաօժանդակ նյութերի կամառքը: Գումար կարող է զանգվել միայն նախարարի հրամանով հաստատված դասագրքերի համար՝ ըստ գործող կարգի: Գումարի չափը եւ գրքերի անվանացանկը պետք է փակցված լինեն դպրոցում: Այն ծնողները, ովքեր իրականում ցանկություն ունեն իրենց երեխաների համար ձեռք բերել լրացուցիչ ուսումնական նյութեր, պետք է օգտվեն համապատասխան գրախանութներից: ՀՀ ԿԳՍ «ԹԵԾ Գիծ» շարունակում է ընդունել զանգեր՝ դպրոցներում ապօրինի դրամահավքի հետ կապված:

Մեղրեցիները մտահոգված են

ՀԻՄՆԱԽՆՆԻՐ

Սկզբը՝ էջ 1

արյան բարձր խտությունից, գլխացավերից, հոգնածության զգացողությունից, հողացավերից: Ակնհայտորեն ավելացել են օժկուղոգիական (ուռուցքային) հիվանդությունները: Տարեցտարի անկում է ապրում հողի բերրիությունը, փոխվում է հողերի տեսքը, չորանում են ծառերը, բանջարեղեն գրեթե չի ստացվում, գյուղատնտեսությանը զբաղվելը դառնում է անիմաստ: Դատարկ ապարները, որոնք նույնպես շատ թունավոր նյութեր են պարունակում եւ ոչ պակաս վտանգավոր են, ծածկում են շրջակա ծորերն ու կիրճերը եւ լեռնային գետակների գորտն առնալ լցվում Մեղրի գետը, այսիցն՝

ոռոգման համակարգ: Տնտեսվարող սուբյեկտները, համապատասխան գերատեսչությունների թույլտվությամբ հասարակությունից ուղղակի գաղտնի մտնում են ուրանի, թորիումի նախկինում երեւակված տարածքներ (Լիճք, Տաշտուն, Լիճքվազ-Թեյ) եւ գունավոր մետաղների հավելյալ հետախուզական-որոնողական աշխատանքներ իրականացնում՝ ապագայում դրանց արդյունահանման նպատակով: Տեղեկատվության բացակայությունը լուրջ ռիսկեր է ստեղծում ինչպես հանրության աշխատող, այնպես էլ աղբեղության գոտում գտնվող բնակավայրերում ապրող մարդկանց համար, ովքեր հիմնականում աղքատ են եւ կարիք ունեն աշխատատեղերի, իսկ նշված

ընկերությունների խոստումները սոցիալական ոչ բարվոք վիճակի համապատկերի վրա զայթակղիչ են: Եթե մեր տարածաշրջանի նկատմամբ վարվող քաղաքականությունը չփոխվի, ապա կասկածից վեր է, որ դրա արդյունքում Մեղրու շրջանը մեկ-երկու տասնամյակ անց կվերածվի անապատի՝ աղտոտված գետերով, թունավորված հողով, իսկ երեխաները կօճակնալ հիվանդ եւ արատավոր, ինչի նշաններն արդեն իսկ երեւում են:

Ելնելով վերը նշվածից, խնդրում ենք առանց հասարակելու ուղերձի «Տեղական ինքնակառավարման մարիմների մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի համաձայն, մեկամսյա ժամկետում կատասխանի մեղրեցիներին:

թյան վրա եւ Մեղրու տարածաշրջանում ստեղծված բնապահպանական վիճակն ու դրանից բխող հրատապ խնդիրները քննարկել Հայաստանի Հանրապետության կառավարության միտումնալ նախապես անցկացնելով իրավիճակի մասնագիտական եւ բազմակողմանի հետազոտությունը: Ըստ մեր ունեցած տեղեկությունների՝ մոտ օրերս Մեղրու ավազանի կենտրոնի այդ դիմումը եւ, ամենայն հավանականությամբ, ստեղծված իրավիճակի կապակցությամբ ուղերձ կիղի ՀՀ նախագահին, ով էլ, «Տեղական ինքնակառավարման մարիմների մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի համաձայն, մեկամսյա ժամկետում կատասխանի մեղրեցիներին:

Արտասովոր իրավիճակ. թեկնածուների առաջնությունն եւ այլընտրանքի բացակայություն

ՓԵՏՐՎԱՐԻ 18-ԻՆ՝ ՀՀ ՆԱԽԱԳԱՀԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆ

Սկզբը՝ էջ 1

50409: Հիշեցնենք, որ 2012թ. մայիսի 6-ի Աժ ընտրություններում համաձայնական ընտրակարգով ընտրողների թիվը մարզում 121449 էր: Սարգի ընտրողների թիվը վերջնականապես կհետազոտվի գործառնություն ընտրացուցակները հրապարակելուց հետո: ■

ՏՊԱԳՐՎԾ ԾՍՉՈՒԹ, ՉՈՒԹ | ԾՉԻ ՉԻ ՉՊԱԳՐՎԻ

ԴԱՎԻԹ ԳԱՍՊԱՐՅԱՆ. «Ցավո՛ք, ամեն մի ժամանակ ձգտում է Չարենցին հարմարեցնել իր պարկերացումներին»

Սկզբը՝ էջ 2

տանում, եթե տպագրվելու են, թող Չարենցիի մասին տպագրվեն: Խոհուն կինը ճիշտ է մտածել: Բայց որդին ձեռագրերի պատճենները վաճառել է օտարերկրացուն: Արդյո՞ք միայն պատճենները... Բնագրերի մի մասը կարողացանք դարձնել պետական սեփականություն:

Բազմիցս ելույթներ ունեցա մանուկում, հեռուստատեսությամբ, ռադիոյով, հորդորելով, որպեսզի այդ ինքնագրերը դարձնեն պետական սեփականություն, մեր ազգային հանճարի գրական ժառանգությունն ո՞ւմ ձեռք են տվել: Այնքան ասացի, որ իմ խոսքն ի վերջու տեղ հասավ, եւ 2008-ի սեպտեմբերի 10-ին ձեռագրերի վաճառքն իրականացավ: Այդ ժամանակ պետությունը գնեց ձեռագրերի մի մասը: Քանի որ, ի վերջու, այդ ձեռագրերը դարձան պետական սեփականություն, կարողացա դրանք ուսումնասիրել: Ձեռագրերի էջերը դասավորությունից հեռացել էին, ցրվել, խառնակ վիճակ էր: Այդ ամենի կապերը գտնել, դասավորել, արդեն իսկ տառապանք էր: Փոքրիկ թղթերի վրա է գրել, մեկի երեսին չի տեղավորվել, անցել է մյուսին, չի տեղավորվել, կողքին է գրել, չի տեղավորվել, մյուս էջին է շարունակել, բանաստեղծության սկիզբն ու վերջը գտնելը երբեմն անգամ անհնարին էր: Ես երեք-չորս տարի կարդում էի, դժվարին պայմաններում, այդ ժամանակ Չարենցի անվան գրականության եւ արվեստի բանգարանը նորոգում էին, պայմաններ չկային, խոշորացույցով երբեմն ժամերով մեկ բառ էի վերծանում: Ի վերջու, այդ դժվարությունները հաղթահարեցի, արտագրեցի ամբողջը, ոչ թե պատճենահանեցի եւ լուսանկարեցի: Դեռ-տպագրում Մատենադարանի ձեռք բերածն էլ ուսումնասիրեցի, եւ այդ ամենն ամբողջացավ ու դարձավ գիրք, որ տպագրվեց պետական տիրույթով: Մի անտիպ ժառանգություն, որ ստացավ «Գիրք մնացորդաց» վերնագիրը:

Ինչո՞ւ ընտրեցի այդ վերնագիրը, որովհետեւ Չարենցի վերջին գիրքը վերնագրված էր՝ «Գիրք ճանապարհին»: Այս վերնագրի բառակարգն արդեն կար: «Գիրք մնացորդաց» վերնագիրն ունի Աստվածաշնչյան ծագում՝ «Գիրք առակաց», «Գիրք թագավորաց» եւ այլն: Հակոբ Օշականի իր քառափորված վեպի վերնագիրն այդպես է դրել, թե՛ն վերջին հատորը գիտակցաբար չի գրել: Ինչ-չեւ, այդ գրքի տպագրությունը ընթացք ստացավ:

— Այդպես չարչարանքից հետո, ցավոք, գիրքը չհասավ ընթերցողին, նրա սեփականությունը դառնալու փոխարեն արգելակվեց, ո՞րն է պատճառը:

— Այո, գիրքը լույս տեսավ եւ փոխանակ դառնալու մշակութային տոն, փառատոն, ոմանց ջանքերով դարձավ սզահանդես: Այն առումով, որ դատարկ ու փուչ գրքերի համար են շնորհանդես անում: Գիրքը լույս է տեսել 500 օրինակ տպաքանակով: Հայաստանում գրեւ 500 մտավորական չկա՞, որ այս գրքի կարիքն ունենա, իհարկե կա, հազարը կա, այս ամբողջ ժամանակ ինձ անընդհատ զանգահարում են, հարցնում, թե որտեղի՞ց կարելի է ձեռք բերել, ընդ որում՝ գիրքը մինչեւ գրախանութ հասնելը, ում հանդիպում էի, ասում էր՝ ես գիրքը ունեմ: Հարցնում են՝ այ մարդ, որտեղի՞ց, թե՛ ձեռք են բերել:

Որտեղի՞ց են ձեռք բերել, ինչպե՞ս... Դեռ գիրքը գրախանութ չհասած՝ Չարենցիի տուն-թանգարանի տնօրենը, թե՛ ես ճարել եմ գիրքը, որոշ բաներ անգլերեն ենք թարգմանում:

Քանի որ գիրքը սեփական միջոցներովս չեմ տպագրել, չէի կարող ձեռքս դնել տպաքանակի վրա եւ սաստել: Սա դեռ ամենը չէ: Դեռ ինձ զանգահարեցին մշակույթի նախարարության գրադատարակազան բաժնից, թե՛ Չարենցիի աղջկը դժգոհել է. Չարենցին լավ չես ներկայացրել, առաջաբանի մեջ ինչ-ինչ բաներ այն չեն եւ դիմել է, որ ոչնչացնեն գիրքը: Ահա այդպես, ոչ ավել, ոչ պակաս: Այդպես էլ արեցին, իհարկե, չայրեցին, այլ որոշեցին տպաքանակը մեկուսացնել Չարենցիի տնօրենի պահուստում: Ոչնչացնելու մի ձեռք էլ գիրքը լռեցնելն է ու գիրքը կազմողի աշխատանքը սեւացնելը: Գիրքը, թե՛ Չարենցի «Գիրք ճանապարհին» ժողովածուի հետ ինչ օյն եկավ: Ժողովուրդը, որ ասում է՝ կարկուտը ծեծած տեղն է ծեծում, այսօր նույնը եղավ: Այս գիրքը եւս ենթարկվեց «Գիրք ճանապարհին» տխուր ճակատագրին: Ես էլ կարծիքս հայտնեցի հեռուստատեսությամբ, մասնավոր՝ փոխանակ աշխատող մարդու ճակատը համբուրեմ, ընդհակառակ՝ ի՞նչ հայտնաբերեցի հնչեցին, ի՞նչ զարշելի խոսքեր տարածեցին, հակառակորդներն աշխուժացան, թե՛ այս մարդուն խիչելու ժամանակն է՝ խփենք, բայց ոչ մի բան չէին կարող անել, որովհետեւ գիրքը կար, ինչպես ասում են՝ երեխան ծնվել է, ուզում են՝ հայրություն արա, ուզում են մի արա, արդեն ծնվել է, ինքն իր ինքնուրույն կյանքով ապրելու է, ուզում են վատություն անել, վերստին չեն կարող:

— Խնդրեմ ներկայացրեք գրքի բովանդակությունը:

— 1935-1937-ին Չարենցի մահվան օղակը սեղմվում էր: Չարենցը գզում էր մահը, գրքում ընդգրկված են քաղաքական գործիչների նվիրված երկեր, այդ թվում՝ Աղասի Խանյանին նվիրված «Դոֆինը նահապետի» շարքը՝ ամբողջական, լիակատար ձևով՝ տարբերակներով, բացատրություններով, ամեն ինչով: Գրքում տեղ են գտել իր գրական ընկերներին՝ Բակունցին, այլոց նվիրված բանաստեղծություններ, գրքում ընդգրկվել են Չարենցի՝ զգայավառ, էրոտիկ բովանդակություն ունեցող բանաստեղծությունները: Անգամ Արուս Ռսկանյանին նվիրված պոեմներից մեկում այսպիսի մի ցուցում կա. ասում է՝ Արուս, կատակով գրած այս ստույգը վաղը, մյուս օրը հանկարծ կընկնեմ մեկ ուրիշի ձեռքը եւ ինձ կնեղարդեն մագոխիզմի եւ այլնի մեջ: Ասում է՝ ավելի լավ է՝ ոչնչացնես: Բայց եւ «Ազն»-ում ցուցում է տալիս՝ ինչ գնով էլ լինի, անգամ իր կյանքի գնով անտիպ գրությունները պահպանել, չոչնչացնել՝ ի պահ տալ գրական թանգարանին: Ահա այս բնույթի գործեր են, պոեմներ, բանաստեղծություններ, որոնք ժողովածուի գեղարվեստական մասն են:

Դրանց հաջորդում են բազմաթիվ պաշտոնական գրություններ, նամակներ, տարբեր կարգի գրություններ, թարգմանություններ, կենսագրական վավերագրեր, Ժամթագություններ, ստղերի տարբերակներ: Գիրքն ունի առաջաբան, ունի վերջաբան, մաւ Չարենցի կյանքի ու գործունեության համա-



նոտ տարեգրություն:

Ես պաշտպանում եմ այս գիրքը, մարդ կա, որ այսքանից հետո փոշմանում է, չէ՞: Երանի եմ տալիս այն օրվան, որ գիրքը կհասնի ընթերցողին, կկարդան: Ցավոք, ամեն մի ժամանակ ձգտում է Չարենցին հարմարեցնել իր պատկերացումներին, բայց Չարենցի ազատությունն անսահման է: Չարենցին ընկալելու համար անհրաժեշտ է հասուն հանրություն, եւ ամենակարևորը՝ անհրաժեշտ է ոչ միայն լսել, այլեւ կարդալ, բնագրին մոտենալ, սկզբնաղբյուրին մերձենալ: Դա է փրկության օղակը, հակառակ դեպքում ծովի սեւ հորձանքի մեջ մարդ կխեղդվի:

— Իսկ ինչպե՞ս եք տեսնում փրկության այդ օղակը, երբ անընդհատ ասում են՝ երիտասարդությունը չի կարող, մարդիկ հետ են վարժվել ընթերցանությունից:

— Բնավ էլ այդ կարծիքին չեն: Զեք կարդում դասատուները, չեն կարդում դասախոսները: Եվ քանի որ իրենք չեն կարդում, չեն պահանջում նաեւ իրենց սաներից: Ինքս դասավանդել եմ, պահանջել եմ, լավ էլ կարդում են: Եթե պահանջում ես եւ անձնական օրինակ ես ծառայում, հետեւում են քեզ, չէ՞ չէ, ամեն ինչ գալիս է ոչ թե սանից, այլ ուսուցից: Լավ ուսուցիչը կարող էլ կտա, վատ ուսուցիչը կընեցնի:

— 2012-ին երևանուց հեռացել էր գրքի համաշխարհային մայրաքաղաք: Որքան՞ով դա նպաստեց գրքի պրոպագանդմանը:

— Երեւանում նոր գրախանութ չբացվեց, Երեւանում գիրք կալանավորվեց, Երեւանում գրքի մեծ քարոզչություն չէր լավ, ինչ-ինչ մարդիկ իրենց փառասիրությունը բավարարեցին՝ այստեղ-այնտեղ պետության հաշվին ուղեորվելով, ինչ-որ մարդկանց հյուրընկալելով, ծախսեր արեցին, վահանակներ փակցրեցին քաղաքի պատերին՝ դրանց վրա

վատնելով հսկայական գումարներ: Այնինչ մեզ շատ մեծ պատիվ արեցին, հնարավորությունը չպիտի ձեռքից բաց թողնվեր: Տոնը շատ լավ պիտի նշվեր, ընդ որում՝ այս կապակցությամբ ես ձեզ մի գաղտնիք հայտնեմ. մենք պետականություն չունեինք 1512 թվականին, երբ տպագրեցինք մեր առաջին գիրքը, ռուսները պետություն էին ու կայսրություն, եւ մեզնից 50 տարի հետո միայն տպագրեցին իրենց առաջին գիրքը: Այ, սա է հայ ժողովրդի ոգու ուժը:

— 1996-ին Չարենցիին անտեսալ «Նորահայտ էջեր», նախորդ տարի՝ «Գիրք մնացորդաց», ե՞րբ կլինի հաջորդ գիրքը:

— Հաջորդն անպայման կլինի: Արդեն իսկ կա Չարենցի «Ընտիր երկերի» իմ կազմած եռափորված ժողովածուն, որի երրորդ հատորն ամբողջությամբ ընդգրկում է նրա անտիպ ժառանգությունը: Կան չարենցյան անտիպ գործեր, որոնք չեն հանձնվել պետական արխիվներին, դրա համար հետազոտելը դժվար է, իսկ անտիպ ժառանգություն դեռեւս կա:

— Ինչպե՞ս եք պատկերացնում «Գիրք մնացորդացի» ճակատագիրը:

— Ինչպես ասացի, «Գիրք մնացորդացը» այն երեխան է, ով արդեն ծնվել է: Նա իր ինքնուրույն կյանք ունի: Եթե թանգարանում երկար պահեցին, իրենց խնդիրն է, միեւնույն է՝ ինքս կտպագրեմ ու կհասցեագրեմ ընթերցողին: Արդեն իսկ այդ գիրքը կա:

— «Իրավունք» թերթին տված հարցազրույցում ասել էիք, որ «Գիրք մնացորդացը» գիտական հրատարակություն է:

— Այո, դա գիտական հրատարակություն է, դա զանգվածային ընթերցողին չի հասցեագրված: 500 օրինակ տպաքանակով է տպագրված: Մի՞թե Հայաստանում 500 մտավոր

ական չկա, սփյուռքն էլ հետը: Ես ձեռնամուխ եմ եղել Չարենցի երկերի լիակատար հրատարակության ստեղծմանը: Իսկ դրա համար ամեն ինչ փշուր-փշուր պիտի հավաքել, կամաց-կամաց ամեն ինչ ի մի բերել: Ինչպես Գառնին վերականգնեցին, երկնի մի օր էլ Չարենցին վերականգնեցին: Այդպես էլ մի ավերված Չարենցի ժառանգություն է: Երկնի կարողանալը վերականգնել:

— Բայց մտավորականությունն էլ այդ մեթոդի երևույթի առումով, խոսքը գրքի կալանավորման մասին է, կրավորական կեցվածք ընդունեց:

— Նայած մտավորականություն: Կա ճշմարիտ մտավորականություն, որ գիրքը պաշտպանում է, կա «ակտիվ» մտավորականություն, որ առիթը եկել է, ուզում է ինձ հարվածել, քարկոծել: Կա նաեւ մտավորականություն, որ սպասում է, թե մյուսներն ինչ են անում, որ ըստ այդմ կողմնորոշվի:

— 2012-ը, հիրավի, չարենցյան տարի էր, լրացել է ծննդյան 115-րդ տարեդարձը, մահվան 75-րդ տարեիցը, բանաստեղծական գործունեության 100-ամյակը: Ինչպե՞ս նշվեց այդ ամենը մեզանում:

— Լրջորեն կազմակերպված միջոցառումներ չեղան: Դեռ վտանգավոր հարց էր տալիս, քանզի որոշ բացահայտումներ պիտի անեմ: Այսօր չարենցագիտությունն ամոթալի ցածր մակարդակի վրա է: Նախկինում ուժեր կային, որոնք լրջորեն զբաղվում էին Չարենցի ժառանգության ուսումնասիրությամբ: Այսօր մի անուն պիտի տամ, ցավոք, նա էլ տարիքի բերումով, դարձյալ անցյալի մեջ է՝ Ավաստ Չաքարյան, ով ժամանակին լուրջ գործ է արել: Մյուսները եւ սկզբնաղբյուրից են կտրված, եւ բնագրային նոր հայտնագործություններից, ինքնամիտի, հորինված բաներ են անում: Կա խնդիր առարկային առնչվող երեք անտիպ: Հարենցագիտություն, չարենցագիտություն: Չարենցով հետաքրքրված են, Չարենցին սիրում եւ կարդում են. սա շատ ողջունելի եւ ընդունելի է: Բայց սրա կողքին կան չարենցախոսներ, ովքեր պիտի անընդհատ խոսեն: Մի բան չգիտեմ, է՛, լսել են, մի բան կարդացել են Չարենցից: Անգետ դատարակխոսություն է սրանց բնորոշ: Մեր բանաստեղծներից մեկը նախկինում հրատարակել էլ պիտի, այժմ էլ վերահրատարակել է մի գիրք՝ «Եղիշ Չարենց»: Միայն 98 փաստական սխալ են հայտնաբերել: Երեւանի Սվավրեցյան համալսարանը Ազատ Եղիազարյանի խմբագրությամբ հրատարակել է գիրք՝ «Եղիշ Չարենցը եւ նրա ժամանակը»: Պիտե՞րս պալատի գրական խմբակի մակարդակով գրված գիրք է: Այնպես, ինչպես շատ բնագավառներն են անկում ապրում, այնպես էլ չարենցագիտությունը...

Մեր պարտքն է բարձր պահել Չարենցի անունն ու գործը, հասկանալ եւ ընդունել նրան որպես կենդանի մարդ ու բանաստեղծ եւ ոչ թե նրան վերածել կուռքի: Ենթ պետ է անընդհատ գնանք դեպի Չարենցը եւ ոչ թե նրան հարմարեցնենք մեզ, ինչպես այսօր դեռեւս անում են որոշ վաճառականները: Դեպի Չարենցը ոչ թե սոսկ չարենցագիտությամբ ու չարենցախոսությամբ, այլ միմիայն չարենցագիտությամբ:

Ջրույցը՝ ԿԱՐՈՍ ՕՐԵԵԼՅԱՆԻ

Օրենքի գերակայություն, թե՛ օրենքի ընտրուկ կիրառում



Մարզկենտրոնի հանրությունը շարունակում է հետելու Կապանի Զ.Ավետիսյան փողոցի N1 Ա շենքի եւ քաղաքային շուկայի միջանկյալ հարվածում ապօրինաբար կառուցված քաղաքային շուրջ զարգացումներին:

Ինչպես տեղեկացրել ենք «Սյունյաց երկիր» 2012թ. նոյեմբերի 14-ի համարում տպագրված հոդվածում («Մի քրեական գործի մասին, որի քաղաքական ենթատեքստն առայժմ չի բացահայտվում»), 2012թ. ապրիլ-մայիս ամիսներին Կապանի բնակիչներ Արթուր Առաքելյանը, Գարիկ Սահակյանը, Գարիկ Գրիգորյանը, Սամվել Գրիգորյանը, Քնարիկ Գրիգորյանը, Սպարտակ Գրիգորյանը, Արտուր Առաքելյանը, Սամվել Գրիգորյանը, Քնարիկ Գրիգորյանը, Սամվել Գրիգորյանը և Քնարիկ Գրիգորյանը որոշմամբ սահմանված կարգով պարտավոր էր կասեցնել այդ կառույցի իրականացումը, բայց չի կասեցրել (պատճառներն ու հանգամանքները, ինչպես են մեր գիրքորոշումը շարադրել ենք վերջը նշված հոդվածում): Օրենքով իր վրա դրված պարտականությունը չկատարելու համար նրա հանդեպ

6-ին այդ կապակցությամբ հարուցել էր քրեական գործ, մինչև վերջ չկարողացավ խորանալ կատարված օրինախախտման մեջ, գործը քննեց ձեռնարկներն ու այն դատարան ուղարկեց լիովին ու բազմակողմանի չպատասխանեց հարցերին, թե ինչու եւ ինչ հանգամանքների արդյունքում Կապան քաղաքի յոթ բնակիչ գիտակցաբար գնացին օրենքը խախտելու ճանապարհով, թե ինչու Արտուր Առաքելյանը գիտակցաբար եւ հետեւողականորեն չկատարեց օրենքի պահանջն ու չկասեցրեց ապօրինի կառույցի ծնունդը: Նախաքննական մարմինը չհամարձակվեց նույնիսկ իմանալ, թե ինչու էրեւան-Մեղրի միջպետական ճանապարհի հարակից այլ հատվածներում (խնդրո առարկա ապօրինի կառույցի մերձակայքում եւ առասարակ Կապան քաղաքում)՝ շրջանցելով ՀՀ կառավարության 2005թ. դեկտեմբերի 29-ի N2404-Ն որոշումը, կառուցվել եւ կառուցվում են (ու կառուցվելու են հավանաբար) տասնյակ նմանատիպ շինություններ, եւ ոչ ոք արգելք չի հանդիսանում:

Սյունիքի մարզի քննչական բաժինը 2012թ. հունիսի 6-ին ՀՀ քրեական օրենսգրքի 315/2 հոդվածով հարուցել է քրեական գործ: Դիտարկելով դա այն ժամանակ էր, երբ արդեն սկսվել էր պայքարը քաղաքային այդ համայնքի ղեկավարի պաշտոնի համար: Գործի նախաքննությունն էլ իրականացվեց քաղաքապետի ընտրության նախապատրաստման ամենաբուռն շրջանում: Թե ինչ էրված հետո՝ գիտենք: Եվ Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության դատարանը (նախագահող դատավոր Լեռնիկ Աթանյան) 2012թ. դեկտեմբերի 21-ին կայացրեց դատավճիռ, ըստ որի՝ Արտուր Առաքելյանը մեղավոր ճանաչվեց ՀՀ քրեական օրենսգրքի 315/2 հոդվածով նախատեսված հանցագործության կատարման մեջ եւ դատապարտվեց տուգանքով՝ ՀՀ-ում սահմանված նվազագույն աշխատավարձի հազարապատիկի չափով (1 մլն դրամ) եւ երկու տարի ժամկետով գրկվեց որոշակի գործունեությանը զբաղվելու իրավունքից:

Դատավարության բուն ընթացքի հետ կապված, ըստ էության, հարցեր եւ տարակուսներ չունենք (ի դեպ, մեր ստեղծագործական խումբը մասնակցում էր դատական բոլոր նիստերին), բայց... Դատական նիստից հետո, ինչպես սպասվում էր, ծագեցին մի քանի հարցեր, որոնց արձանագրումը կարելու էր համարում:

Նախ՝ Սյունիքի մարզի քննչական բաժինը, որ 2012թ. հունիսի

նույն ժամանակահատվածում տեսչությունը, եթե, իհարկե, գրասենյակում կառույց չէ եւ թաշկինակ չէ ուրիշների ձեռքում, պետք է նոր գրություն հղի Սյունիքի մարզի դատախազին եւ Կապանի նոր քաղաքապետին՝ ապօրինաբար կառուցված տաղավարը քանդելու համար, ինչին պիտի հաջորդեն կոնկրետ քայլեր: Սյունիքի մարզպետարանն էլ, բնականաբար, կմնա իր սկզբունքներին ու կառավարության նշված որոշմանը հավատարիմ ու այդ կառույցի օրինականացմանը չի ընդառաջի (այդպես ենք կարծում), քանի որ նախկինում երբեք անգամ մերժել է այն օրինականացնելու վերաբերյալ նախկին քաղաքապետի դիմումը: Կապանի նոր քաղաքապետ Աշոտ Հայրապետյանն էլ, իհարկե, պետք է կատարի «Տեղական ինքնակառավարման մարմինների մասին» ՀՀ օրենքով իր վրա դրված պարտականությունը եւ վերացնի ապօրինի այդ շինությունը կամ այն վերցնի համայնքի հաշվեկշիռն ու վաճառքի համար՝ գնելու առաջնային իրավունքը վերապահելով դրա նախկին տերերին: Ուզում ենք հավատալ նաեւ, որ Սյունիքի մարզի քննչական բաժինն էլ (մարզի դատախազության հսկողությամբ), կառույցը չքանդելու կամ չօրինականացնելու պարագայում, նոր քրեական գործ կհարուցի ՀՀ քրեական օրենսգրքի 315/2 հոդվածի հատկանիշներով, թե չէ կշարունակի թեւածել կարծիքը, որ մեզանում օրենքը, այնուամենայնիվ, ընտրուկությունը է կիրառվում:

Մինչ այդ Կապանում անցնելի ճշմարտության պես է ընկալվում վարկածը, որ ապօրինի շինությանը շուրջ մոզոնված քրեական գործը քաղաքական հստակ նորժամաչք ուներ, այն է՝ խոչընդոտել այն օրերի գործող քաղաքապետի վերընտրությանը:

Հիմա եկել է ժամանակը, որ պատկան մարմիններն ու պաշտոնյաներն ապացուցեն հանրության մեջ իշխող այդ տեսակետի ամհիմն լինելը (եթե, իհարկե, անհիմն է) ու օրենքի գերակայությունն ապահովելու հարցում բոլորիս ձգտման անկեղծությունը:

ՍՍՄԿԵԼ ԱՆԵՔՍԱՆՅԱՆ

Առաջին մրցանակային պատվավոր տեղը՝ Գորիսի զինկոմիսարիատին



ԳՆԱՅԱՏԱՆԵ

2012թ. արդյունքներով, Հայաստանի Հանրապետության պաշտպանու-

թյան նախարար Սեյրան Օհանյանի հրամանով, Գորիսի զինվորական կոմիսարիատը ՀՀ տարածքային երկրորդ կարգի զինկոմիսարիատների

մեջ (զինկոմիսարիատները հանրապետությունում դասակարգված են երեք կարգի՝ 1-ին, 2-րդ, 3-րդ՝ կախված բնակչության թվից) ճանաչվել

է Հայաստանի Հանրապետության լավագույն զինկոմիսարիատ: Այդ կապակցությամբ զինկոմիսարիատը պարգևատրվել է փոխանցիկ դրոշով, դրամական պարգևով, իսկ զինկոմը՝ անվանական զենքով:

Վերջին տարիներին Գորիսի զինկոմիսարիատն աչքի է ընկել բարձր կարգապահությամբ, մարտական պատրաստությամբ, ընդհանուր խնդիրների պատշաճ իրականացմամբ եւ հատկապես զորահավաքային ու զորակազմային խնդիրների հաջող կատարմամբ:

Հիշեցնենք, որ զինվորական կոմիսարը զնդապետ, Արցախյան գոյակնվի ճանաչված ջոկատներից մեկի հրամանատար, 1-ին աստիճանի «Մարտական խաչ» շքանշանի ասպետ Սելիքսեթ Պողոսյանն է: Նա այդ պարգևի արժանացել է հայրենիքի պաշտպանության եւ անվտանգությանն ապահովման գործում ցուցաբերած բացառիկ արիության, անձնուրացության եւ հմտության համար: Ընտրվելով է Գորիսի զինվորական կոմիսարիատի կոլեկտիվին, զինվորական կոմիսար Սելիքսեթ Պողոսյանին՝ զինկոմիսարիատի առջեւ ծառայած խնդիրները լավագույնս կատարելու համար եւ մարզում նորամուտ հաջողություններ՝ ի փառս եւ զորությունը Հայաստանի զինված ուժերի:

ՄՄ



Համագործակցությունը՝ պետական շահերի պաշտպանության երաշխիք

ԴԱՏԱՍԻԱԶՈՒԹՅՈՒՆ

Հունվարի 11-ին Սյունիքի մարզի դատախազ Լորայր Դակոբյանն աշխատանքային այցով Մեղրիում էր: Նա հանդիպեց տարածաշրջանի համայնքապետերի եւ տեսչական ծառայությունների մարզային ղեկավարների հետ: Հանդիպման նպատակն էր համայնքների ղեկավարների, մարզի դատախազության եւ տեսչական ծառայությունների ղեկավարների փոխհամագործակցության կազմակերպմանը պետական շահերի պաշտպանության ոլորտում: Նորայր Դակոբյանը ողջունեց ներկայից ցանկանալով բեղմնավոր աշխատանք եւ հույս հայտնեց, որ այսուհետ կհամագործակցեն մարզի դատախազության հետ, քանի որ վերջինս պարտավորված է պաշտպանել պետության շահերը: Նա իր խոսքում մշեց, որ Մեղրու տարածաշրջանում հիմնականում առկա են բնապահպանական եւ քաղաքաշինական խնդիրներ, դրանցից են՝ ապօրինի քաղաքաշինություն, որսագողություն, ծառահատումներ, ջրային ռեսուրսների աղտոտում եւ այլն: Նմանօրինակ դեպքեր հայտնաբերելու դեպքում ՏԻՄ ղեկավարները պետք է դիմեն համապատասխան տեսչության մարզային կառույցին, ապա՝ մարզի դատախազություն՝ որն օրենքով լիազորված է պետության շահերը պաշտպանել: Հանդիպմանը ներկա բնապահպանական պետական տեսչության Սյունիքի տարածքային բաժնի պետ Լեւոն Պետրոսյանը ներկայացրեց բնապահպանության ոլորտում խախտումներ արձանագրելու դեպքում համայնքի ղեկավարների գործողությունների հաջորդականությունը եւ պատասխանեց ՏԻՄ ղեկավարներին հետաքրքրող հարցերին՝ ապօրինի ծառահատումների, գայլերի որսի թույլատրելիության եւ այլնի մասին: «Արելի» ազգային պարկի տնօրեն Սուրիկ Գրիգորյանին էլ իր հերթին հավաստեց, որ վերջինի շրջանում տարված աշխատանքների շնորհիվ որսագողության եւ ապօրինի ծառահատումների դեպքերը խիստ նվազել են: Հանդիպման ավարտին Նորայր Դակոբյանը հույս հայտնեց, որ այժմ արդեն, երբ համայնքի ղեկավարներն իրագրվել են, թե ինչպես պետք է վարվեն պետական շահերի խախտման դեպքում, կհամագործակցեն Սյունիքի մարզի դատախազության հետ: Այնուհետեւ տեղի ունեցավ քաղաքացիների ընդունելություն, մարզի դատախազը պատասխանեց մեղրեցիներին հույս հարցերին եւ մատնանշեց այն ուղիները, որոնցով քաղաքացիները կարող են ստանալ իրենց մտահոգող հարցերի պատասխանը: Մարզի դատախազը հունվարի 12-ին մեծօրինակ հանդիպում կազմակերպեց նաեւ Սիսիանում:

ՄԱՐԿԻ ՆԱԿԱՍՏՈՒԹՅԱՆ

ԲԱՁԹՅՈՒՆ

Ականավոր հայագետի բազմափուլային իրականություն

Իրականություն դարձավ Նիկողայոս Ադոնցի երկերի վեց հատորի հրատարակությունը: Հինգերորդ եւ վեցերորդ հատորները լույս տեսան 2012թ. փարեվերջին, իսկ 1-4-րդ հատորները լույս են տեսել 2006-09թթ.:

2012թ. դեկտեմբերի 27-ին Երեւանի պետական համալսարանում տեղի ունեցավ համաշխարհային ճանաչուն ունեցող պատմաբանի երկերի վեց հատորի շնորհանդեսը:

Ելույթ ունեցողները երախտագիտություն հայտնեցին «Գալուստ Կյուլպենկյան» հիմնարկությանը, այդ հիմնարկության հայկական բաժանմունքի տնօրեն, դոկտոր Զավեն Եկանյանին՝ մեծանուն հայագետ Նիկողայոս Ադոնցի երկերի ժողովածուի վեց հատորակա հրատարակումը նախաձեռնելու եւ հովանավորելու համար: Ծնորհանդեսի մասնակիցները առանձնահատուկ հարգանք ընծայեցին պատմական գիտությունների թեկնածու, պրոֆեսոր Պետրոս Գուլբահյանին, ով պատրաստել է բոլոր հատորների հրատարակումը եւ ով գլխավորել է վեց հատորի հրատարակման խմբագրական հանձնաժողովը:

Երկերի առաջին հատորը ընդգրկում է հին եւ միջնադարյան Հայաստանի քաղաքական պատմությանն ու հոգեւոր կյանքին, սոցիալ-տնտեսական հարաբերություններին նվիրված հիմնավոր աշխատությունները:

Երկրորդ հատորը ընդգրկում է գիտական տարաբան հանդեպներում եւ ժողովածուներում տպագրված հայ հին եւ նոր գրականության պատմության հարցերին, ինչպես նաեւ գրական առանձին հուշարձաններին, դեմքերին ու գրականության խնդիրներին նվիրված հետազոտությունները:

Երկրորդ հատորը ընդգրկում է հայոց լեզվի քերականությանը եւ ընդհանրապես հայերենի նվիրված ուսումնասիրությունները: Հատորում «Պիոնիրիստ Թրակացին եւ հայ մեկնիչները» աշխատությունը հայերեն լույս է տեսնում առաջին անգամ, մյուսները, տպագրված լինելով սփյուռքի մամուլի էջերում, քիչ են հայտնի ընթերցողին:

Չորրորդ հատորը ընդգրկում է ականավոր հայագետի «կարապի երգը»՝ մահվան նախօրյակին գրված քառահատոր «Քննական պատմություն հայոց»-ի առաջին «Հայաստանի պատմություն: Ավուրները X-VIդդ. Ք.ա.» հատորը, ինչպես նաեւ հայ ժողովրդի կազմավորմանը վերաբերող հոդվածները:

Հինգերորդ հատորը ընդգրկում է Նիկողայոս Ադոնցի բյուզանդագիտական ուսումնասիրությունները, որոնց մեծ մասը նախապես լույս է տեսել ֆրանսալեզու գիտական պարբերականներում եւ զետեղվել 1965թ. Լիսաբոնում ֆրանսերենով հրատարակված «Հայ-բյուզանդական նոթեր» ժողովածուում:

Վեցերորդ հատորը ընդգրկում է ականավոր հայագետի հրատարակչությունը:

Ծնորհանդեսի մասնակիցները ցանկություն հայտնեցին շարունակված տեսնել մեծ հայագետի ու բյուզանդագետի գիտական ժառանգության մնացյալ մասի հրատարակումը եւ բազմափուլային հետազոտություններում տեսնել մասնավորապես նրա նամակների եւ, իհարկե, «Հայաստանը Զուստինիանոսի դարաշրջանում» կործանված աշխատությունն ու արխիվներում գտնվող եւ ընթերցողին դեռեւս անհայտ, ուշագրավ գործերը: Ելույթներում հինգ տարի ցանկությունների դրականորեն արձագանքեց Երեւանի պետական համալսարանի ռեկտոր, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Արամ Սիմոնյանը, ով նույնպես մասնակցում էր շնորհանդեսին:

Երեւանի պետական համալսարանի պատմության ֆակուլտետի դեկան, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Եղիշ Սիմոնյանը, ով հանգամանակից ներկայացրեց Նիկողայոս Ադոնցի երկերի վեց հատորի բովանդակությունը, գնահատանքի խոսք ուղղեց նաեւ «Այոնյաց երկիր» թերթի խմբագրությանն ու Սիմոնյանի քաղաքապետարանին, որոնց համատեղ ջանքով 2011թ. հոկտեմբերի 18-ին լույս տեսավ «Այոնյաց երկիր» հատուկ համարը՝ նվիրված Նիկողայոս Ադոնցին, ինչպես եւ Սիմոնյանի մույս տարվա դեկտեմբերի 2-ին կազմավորվեց գիտաժողով՝ նվիրված աշխարհառջակ հայագետին ու բյուզանդագետին (Էղիշ Սիմոնյանի ելույթը ներկայացվում է ընթերցողին):

Նիկողայոս Ադոնցի երկերի ժողովածուի վերաբերյալ ելույթ ունեցավ նաեւ ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի պատմության ինստիտուտի տնօրեն, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Աշոտ Մելքոնյանը:

Ծնորհանդեսին հրավիրված էր եւ մասնակցում էր նաեւ «Այոնյաց երկիր» թերթի խմբագիր Սամվել Ալեքսանյանը: Ծնորհանդեսը վարում էր Երեւանի պետական համալսարանի հրատարակչության տնօրեն Պերճ Ստեփանյանը:

ԱՐԱՎՆԻ ՆԱԿԱՍԱՐԱՅՆ

Նիկողայոս Ադոնցի գիտական ժառանգությունը

ԷԴԻՎ ՄԻՆԱՍՅԱՆ

Երեւանի պետական համալսարանի պատմության ֆակուլտետի դեկան, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր



Ուղիղ մեկ տարի առաջ, երբ մենք ԵՊՀ Հայոց պատմության ամբիոնի մի շարք դասախոսներով Սիսիանում մասնակցում էինք նույն ամբիոնի պրոֆեսոր Պետրոս Գուլբահյանին, Սիսիանի քաղաքապետ Աղասի Հակոբջանյանի եւ «Այոնյաց երկիր» թերթի նախաձեռնությամբ հրավիրված սիսիանցի աշխարհահռչակ հայագետ-բյուզանդագետ, հայ վերլուծական պատմագրության հիմնադիր Նիկողայոս Ադոնցի մանյան 140-ամյակին նվիրված գիտական կոնֆերանսին, հուրախություն բոլորի, Պ.Գուլբահյանը հայտարարեց, որ 2012թ. կիրատարակվի Ն.Ադոնցի երկերի 5-րդ հատորը եւ կամբողջանա նրա գիտական վաստակի մեծագույն մասը: Իսկապես, 2006-2012թթ. ընթացքում ամվանի աղոնցագետ, պրոֆեսոր Պետրոս Գուլբահյանի երկարատե տընաջան աշխատանքի շնորհիվ Երեւանի պետական համալսարանի հրատարակչությունը (տնօրեն՝ Պերճ Ստեփանյան), «Գալուստ Կյուլպենկյան հիմնարկության» հայկական բաժանմունքի դեկանար ղովակող Զավեն Եկանյանի սիրահոժար նախաձեռնությամբ ու նյութական աջակցությամբ, ընթերցող լայն հասարակությանը եւ գիտական հանրությանը մատուցեց հայ ականավոր պատմաբան, բանասեր, բյուզանդագետ, կովկասագետ Նիկողայոս Ադոնցի գրավոր ժառանգությունը՝ երկերի 6 հատորով(1): Ն.Ադոնցի երկերի հրատարակությունը կարելուք ներդրում է ոչ միայն հայ պատմագիտության, այլեւ համաշխարհային գիտության ասպարեզում: Բազմիցս ձեռնամուխ են եղել նրա երկերի հրատարակմանը, բայց չի հաջողվել, որովհետեւ Ադոնցը գրել է հայերեն, անգլերեն, ֆրանսերեն, ռուսերեն, հունարեն, տպագրվել է Պետերբուրգում, Բրյուսելում, Փարիզում, Լիսաբոնում, Բոստոնում, Լոնդոնում եւ այլուր: Բազմազան է նաեւ Ադոնցի ուսումնասիրությունների ոլորտը՝ պատմագիտություն, բանասիրություն, լեզվաբանություն, բնագրագիտություն, կրոն, արվեստի տարբեր ճյուղեր, բյուզանդագիտություն: Տեղին է խոստովանել, որ տարիներ շարունակ որոշ աշխատանք, այնուամենայնիվ, կատարվել է Ն.Ադոնցի գիտական ժառանգության հրատարակման ուղղությամբ: Դեռեւս նրա կենդանության օրոք պատրաստված առաջին ժողովածուն լույս տեսավ միայն մահվանից հետո՝ 1948 թվականին: 1960-ական թվականներից հետո միայն կոնկրետ քայլեր ձեռնարկվեցին Ն.Ադոնցի առանձին գործերի հրատարակման ուղղությամբ, որոնցից էր պատմաբանի ստեղծագործությունների գլուխգործոցը՝ «Հայաստանը Զուստինիանոսի դարաշրջանում» մեծածավալ մեծագրությունը ռուսերեն (1971թ.), իսկ հա-

յերեն թարգմանությամբ հրատարակվել է 1987թ.: Այն դուրս է մնացել վեցհատորակից Ն. Ադոնցի սեւագիր, անմշակ որոշ ուսումնասիրությունների, հրատարակչության երկասիրությունների, նամակների եւ մի քանի մանր հետազոտությունների հետ միասին, որոնք ցրված են եվրոպական եւ հայկական մամուլի էջերում: Անհրաժեշտ է ընդգծել, որ առաջին անգամ է հրատարակվում ականավոր հայագետի երկերի համահավաք վեց հատորով, որն իսկապես Երեւույթ է մեր իրականության մեջ: Հիշատակված փաստերը բավական են պատկերացում կազմելու համար, թե ինչ մեծ ծավալի գիտահետազոտական մանրակրկիտ ու տընաջան աշխատանք է կատարել պրոֆեսոր Պ.Գուլբահյանը Բեյրութում գտնվող մեծավաստակ գիտնականի թողույթում գտնվող նյութերն ու ուսումնասիրություններն ի մի բերելու, դասակարգելու, արտասահմանյան եւ տեղական, օտարալեզու եւ հայկական ամսագրերում ու մամուլում տպագրված հոդվածները հավաքելու, թարգմանելու, համակարգելու եւ դրանք համահավաք հատորներով հրատարակության պատրաստելու ուղղությամբ:

Ն.Ադոնցի կյանքի ուղին եւ գիտական ժառանգությունն այսօր էլ շարունակում են մնալ հետազոտողների հետաքրքրության շրջանակներում, ուսանելի մնալ գիտության ապագա նվիրյալների համար: Սեֆանյան գիտնականը հազվադեպ ինքնատիպությամբ օժտված անհատականություն էր, որ իր անձնավորության մեջ միավորում էր միջազգային ամենաբարձր արդյունավետ համապատասխանող մտածողին, խոհուն հետազոտողին եւ միաժամանակ նվիրյալ հայ մարդուն, սեփական սկզբունքներին մինչեւ վերջ հավասարիմ հայրենասերին: Բնութագրելով Ն.Ադոնցի դերը պատմագրության մեջ՝ պրոֆեսոր Պ.Գուլբահյանը գրում է. «Նա այնպիսի դեր խաղաց պատմագրության մեջ, ինչպես Հ.Թումանյանը՝ գրականության, Ա.Թամանյանը՝ ճարտարապետության, Վ.Սուրենյանը՝ նկարչության, Հր.Աճառյանը՝ լեզվաբանության, Մ.Աբեղյանը՝ գրականագիտության, Վիկտոր Համբարձումյանը՝ աստղագիտության մեջ»(2): Ն.Ադոնցի շատ ուսումնասիրություններ դուրս են եկել ազգային պատմության շրջանակներից եւ դարձել համընդհանուր պատմագիտությունը հարստացնող արժեքներ: Տարիներ շարունակ /1904-1920/ դասավանդելով Պետերբուրգի համալսարանի Արեւելյան լեզուների ֆակուլտետում եւ գլխավորելով Բրյուսելի Ազատ համալսարանի հայագիտության ամբիոնը /1932-1942/ Ադոնցը հիմնադրեց հնարավորություն ունեցավ մոտիկից ծանոթանալու համաշխարհային պատմագիտական կենտրոններում կատարվող աշխատանքներին եւ դրանց լավագույն արդյունքները ներդրելու իր ստեղծագործությունների մեջ: Ընդ 50-ամյա /1895-1940/ գործունեության ընթացքում նա թողել է 100-ից ավելի ուսումնասիրություն, որոնք վերաբերում են հայագիտության համարյա բոլոր բնագավառներին, ոչ միայն պատմագիտությանը, բանասիրությանը, լեզվաբանությանը, բնագրագիտությանը, այլեւ կրոնի, եկեղեցու եւ արվեստի, հայկական հարցի ու հասարակական մտքի պատմությանը, պատմական աշխարհագրությանը եւ այլն:

Բազմալստակ գիտնականի պատմագիտական ուսումնասիրությունների մեծ մասն ամփոփված է Ա հատորում: Այստեղ ընդգրկված են այն ուսումնասիրությունները, որոնք ժամանակին տպագրվել էին Բոստոնի «Հայրենիք» ամսագրում, ապա՝ Ա.Խոնդկարյանի աշխատասիրությանը լույս տեսած «Պատմական ուսումնասիրություններ» հատորում: Այստեղ է ընդգրկվել Ն.Ադոնցի պատմագիտական առաջին աշխատանքը, որը լույս է տեսել 1904թ.՝ նվիրված մարզպան Վասակի

խնդրին: Սույն փորձածավալ ուսումնասիրությունը մեծ արձագանք գտավ պատմաբանասիրական մտքի եւ ընթերցող հասարակայնության լայն շրջաններում: Անկախ հոդվածի վիճաբանական միտումներից՝ այն մատնանշում էր հեղինակի պատմագիտական լուրջ պատրաստվածությունը, գիտելիքների խորությունը եւ գիտության մեջ նոր խոսք ասելու հաստատականությունը: «Մարզպան Վասակը պատմաբանների դատի առաջ» եւ այս դատին Եղիշի ու Փարպեցու կողքին, որպես արդարախոս վկաներ, ականավոր պատմաբանն ասպարեզ է հանել Կորյունին ու Խորենացուն: Եթե առաջինները չէին տեսնում Վասակի ապրած կյանքում որեւէ լուսավոր կետ, ապա Կորյունն ու Խորենացին Ավարայրի ճակատամարտից հետո պարզապես ծարպանքի ու մեծարանքի խոսքերով են հիշում նրան: Հենց պատմիչների այս հակասական կարծիքների վրա հենվելով՝ բազմավաստակ պատմաբանը խոր քննության է ենթարկում պատմական իրողությունները: Ադոնցի Ա հատորում են ընդգրկվել այնպիսի կարեւոր պատմական ուսումնասիրություններ, ինչպիսիք էին «Հին հայոց աշխարհայացքը», «Հայ հին շինականությունը», «Հայաստանի ոսկե հանքը», «Միհրդատ Եվպատոր եւ Տիգրան Մեծ», «Քաղաքական հոսանքները հին Հայաստանում», «Բագրատունյաց փառքը», «Արտավան Արշակունի», «Մամիկոնյան իշխանուհին բյուզանդական գահի վրա», «Վարդ Մամիկոնյան», «Վասիլ Հայկազան», «Դավիթ Բեկ եւ Տեր Ավետիքի սերունդը» եւ այլն: Այս ուսումնասիրություններից յուրաքանչյուրում կարելի է հանդիպել ականավոր հայագետի նոր ու համարձակ խոսքերին: Ն.Ադոնցը երբեք չէր կրկնում ուրիշներին, ճանաչում էր միայն մեկ գերազույն ճշմարտություն՝ պատմական իրականությունն արդար ու ճշմարիտ խոսքը: «Բագրատունյաց փառքը» շքեղ աշխատության մեջ պատմաբանը քայլ առ քայլ ցույց է տալիս Բագրատունյաց տոհմի ասպետների ջանքերը՝ ուղղված հայ ժողովրդի միասնական ամբողջությունն ապահովելուն: Այստեղ Ադոնցի համար «Ճշմարիտ հայրենասիրությունն ուրիշ նպատակ չունի, եթե ոչ ապահովել հայրենիքին այնպիսի պայմաններ, որ նա կարողանա զարգանալ ազատորեն եւ իր բաժին ծաղիկը բերի համամարդկային քաղաքակրթության փնջին»(3): Նա հազար անգամ իրավացի էր, երբ պատմական փաստերից ու իրողություններից կատարում է միակ ճշմարիտ եզրակացությունը՝ համոզված, որ «Բագրատունյաց ծրագրերը չէին կարող ու չկարողացան հարթահարել կովկասյան ազգերի իշխանավորների կենտրոնախոս ծգությունները, որոնք առավել անհարթահարելի էին դառնում, որովհետեւ կային եկվոր օտարների բռնակալական հարվածները եւ տեղական ավատապետերին սնամեջ թագեր բաշխելու ճանապարհով նրանց իրար դեմ հանելու հին ու փորձված եղանակը»(4):

Ն.Ադոնցի երկերի Բ հատորում զետեղված 32 ուսումնասիրությունից 22-ը մայր հայրենիքում լույս է տեսնում առաջին անգամ: Այդ հատորում ընդգրկվել են բանասիրության խնդիրներին նվիրված Ն.Ադոնցի հիմնական աշխատությունները: Նրա՝ իբրեւ գիտնականի առաջին հետաքրքրությունները վերաբերում էին հայ հին մատնագրության նշանավոր, միեւնույն ժամանակ ականավոր դեմքերին՝ Փավստոս Բյուզանդ, Սովմես Կաղանկատվացի, Անանուհ, Կորյուն, Եզնիկ Կողբացի, Մովսես Խորենացի եւ ուրիշներ: Հատորում զետեղված ուսումնասիրություններում իրեն հատուկ եզակի աշխատասիրությանը, որտեղ լուծվում էր հմտությամբ Ն.Ադոնցը լուծել է բազմաթիվ առեղծվածներ, նորովի մեկնաբանել հայ հին մատնագիրներից շատերի անձն ու գործերը եւ իր մնայուն նպաստը բե-



ԲՄԱԾԾՔՍ օ՞՞

Թե՛ հայ պատմա-բանասիրությանը(5):

Ն.Աղոնցի երկերի Գ հատորը վերաբերում է հայերենագիտական ուսումնասիրություններին: Ինչպես նախորդ հատորները, այնպես էլ Գ հատորն ունի աշխատասիրողների ծանոթությունների բաժին: Այս հատորում զետեղված 14 ուսումնասիրությունից 13-ը մայր հայրենիքում լույս է տեսնում առաջին անգամ եւ ընդգրկում է քերականագիտական, լեզվագիտական ավելի լայն առումով հայերենագիտությանը վերաբերող ուսումնասիրություններ: Ն.Աղոնցը տիրապետելով բազմաթիվ լեզուների՝ հունարեն/հին եւ նոր/, լատիներեն, սանսկրիտ, պարսկերեն, թուրքերեն, վրացերեն, գերմաներեն, ֆրանսերեն, անգլերեն, իտալերեն եւ ռուսերեն, հակառակ ուսուցչապետ Ն.Առաքյալի սպասելիքների, հենց սկզբից չնտանջված լեզվաբանության ասպարեզ: Մաքր հատկապես խրախուսում էր իր այն սաներին, ովքեր մասնավորապես զբաղվում էին բնագրագիտական, լայն առումով՝ բանասիրության եւ լեզվաբանության հարցերով: Սակայն այդ ժամանակ Աղոնցի առավելապես հետաքրքրում էին պատմագիտական խնդիրները եւ պատահական չէ, որ նրա մագիստրոսական թեզը՝ «Հայաստանը Զուստիմիանոսի դարաշրջանում»/պաշտպանել է 1909թ. սպրիլի 5-ին/, նվիրված էր զուտ պատմագիտական նյութի՝ լեզվաբանական պրպտումների արդյունքների հիման վրա: Ն.Առաքյալ այս հանձնարելու ուսումնասիրությունը գնահատել է «որպես հայագիտության հույժ նշանակալից երեւութներից մեկը»(6): Մագիստրոսական թեզի պաշտպանությունից հետո Մառի պնդմամբ Աղոնցը ձեռնամուխ եղավ հայ եւ հույն բովանդակ քերականագիտական մտքի նշանակալից երեւութներից մեկի՝ Դիոնիսոս Թրակացու եւ նրա հայ մեկնիչների քերականագիտական գործերի մանրակրկիտ ուսումնասիրությանը: Երկարատեւ տքնաշուն աշխատանքից հետո նա պաշտպանության ներկայացրեց իր դոկտորական թեզը, որի ընդդիմախոսներն էին Ն.Առաքյալ եւ Ա.Ժեբեղյան: Միայն Ն.Առաքյալ եզրակացությունը բավական է պատկերացում կազմելու թեզի կարեւորության մասին: «Հայկական բանասիրության յուրաքանչյուր ուսումնասիրողի համար «Դիոնիսոս Թրակացին եւ հայ մեկնիչները», անկասկած, պետք է դառնա սեղանի գիրք», - եզրակացրել է Ն.Առաքյալ(7): Իրոք, Ն.Աղոնցի այս աշխատությունը կարեւոր դեր խաղաց հայ քերականագիտական մտքի, հունաբան դպրոցի եւ հարակից խնդիրների հետագա ուսումնասիրության բնագավառում: Ահա թե ինչու անհրաժեշտություն էր դարձել սույն երկասիրության նաեւ հայերեն նոր թարգմանությունը, որը կժառայի որպես ուղեցույց հայ քերականագիտական մտքի համակողմանի ուսումնասիրության համար: Բացի այս հանձնարել երկասիրությունից հատորում տեղ են գտել հայոց լեզվի ուղղագրությանը նվիրված Ն.Աղոնցի «Գրական նշմարներ. լեզվական ուղղագրական» /1904/, «Ուղղագրական եւ տառերի բարեփոխության հանձնաժողովին» /1927/ ծրագրային հոդվածները, քերականագիտական մի քանի աշխատությունների վերաբերյալ լույս տեսած գրախոսություններ եւ ստուգաբանական աշխատություններից երեքը:

1946թ. Փարիզում հետնահու լույս տեսավ Նիկողայոս Աղոնցի «Հայաստանի պատմություն: Ավանդները X-VI դդ. Բ.ա.» սովորածավալ ֆրանսերեն աշխատությունը, որը ներկայացնում էր նշված ժամանակաշրջանի հայ ժողովրդի քաղաքական պատմության եւ ներքին կյանքի փաստերը, Ն.Աղոնցը երբեք նպատակ չի ունեցել հատուկ զբաղվելու Ուրարտուի պատմության ուսումնասիրությամբ եւ այս չպետք է դիտել նշված պարագծում: Նրա կյանքի մեծ ու վե՛ նպատակն է եղել ստեղծել «Հայոց քննական պատմություն, որը բոլոր առումներով կընդգրկվեր հայագիտական գրականության մեջ եւ կհամապատասխաներ եվրոպական չափանիշներին»՝ օտարներին ներկայացնելով հայ ժողովրդի գիտական անաչառ պատմության լուսաբանումը: Համընդհանուր հայոց պատմության գիրք ստեղծելու գաղափարն Աղոնցը մտածել էր դեռ 1920-ական թթ. վերջերին, երբ Փարիզում գործող Սանասարյան ժողովրդական համալսարանի ուսանողների համար վարում էր «Հայոց պատմություն» դասընթացը: Տարիների ընթացքում դասընթացի նյութերն սկսում էր դասակարգել եւ ենթարկել ընդհանուր համակարգի, թե՛ «Հայոց պատմության» ստեղծման աշխատանքները կանոնավոր ու հետեւողական ընթացքի մեջ դնելու ուղղությամբ որքան գործնական քայլ չի ձեռնարկում: Հայոց պատմությունը շարադրելու Ն.Աղոնցի ծրագիրը հավանության արժանացավ Մելքոնյան հրատարակչական ֆոնդի արտասահմանյան հանձնարարի կողմից. «Հանձնաժողովը միաձայն որոշեց տպագրել հայոց հնագույն պատմության վերաբերյալ պրոֆ. Ն.Աղոնցի աշխատությունը», որը պետք է կազմեր «Հայ ժողովրդի պատմության» բազմահատրյակի առաջին հատորը:

Ն.Աղոնցի առաջարկվեց միաժամանակ կազմակերպել ֆրանսերեն բազմահատրյակի հայերեն թարգմանության հարցը: 1938թ. նա հրատարակել է 11 անուն ուսումնասիրություն, որից վեցը ֆրանսերենով, այդ թվում՝ «Սանտեղ հայր բուլղարների թագավոր» մեծագրությունը, նա 1939թ. ընդամենը երկու հոդված, իսկ 1940 եւ 1941 թթ. եւ ոչ մեկը: Անգամ մերժել է «Հայրենիք» ամսագրի՝ «Սասունցի Դավիթ» էպոսի 1000-ամյակի առթիվ հատուկ հոդված գրելու առաջարկը: Նա նախաձեռնեց Հայաստանի քննական պատմության «ամենից դժվար մասը»՝ Հայաստանի հին պատմությունը: Աշխատության առաջին հատորի մեքենագիր օրինակը պատրաստ էր, երբ 1942թ. հունվարի 27-ին Ն.Աղոնցը կնքեց իր մահկանացուն: Միայն նրա մահից հետո՝ 1946թ. կեսերին հրատարակվեց «Հայոց քննական պատմության» առաջին մասը, որը կրում էր «Հայաստանի պատմության ակունքները» խորագիրը: Աշխատանքը ավարտվում է «Ուրարտուի վախճանը եւ նրա պատմական դերը» եզրահանգլից հատվածով, որին Զ.Ջավդյանը որպես հավելված ավելացրել է Ն. Աղոնցի «Հայերի ծագումը» անավարտ ուսումնասիրությունը, ինչպես նաեւ ամբողջական տեսք ունեցող «Ասորական արշավանքների ուրարտուի դեմ», «Հայաստանը Բ.ա. IV-I դարերում», «Կրատուն ընդդեմ պարթեների/ըստ սկզբնաղբյուրների/», «Հայաստանը իռանական պարթեական հակամարտության ոլորտում Բ.ա. IV դ. III դարի սկիզբ» եւ «Բյուզանդա-պարսկական հարաբերություններն ու Հայաստանը IV դարի վերջից-VI դարի կես, թարգմանեց՝ Օ.Վարդապարյանը»:

Ն.Աղոնցի Ե հատորն ամփոփում է նրա բյուզանդագիտական ժառանգությունը: Համաշխարհային գիտական հանրությունը Ն.Աղոնցին ճանաչում է որպես շնորհաշատ բյուզանդագետ: Զբաղվելով հայրենի պատմությամբ՝ նա գրեթե միշտ աչ-

քաղաքական պատմության եւ ներքին կյանքի մանրամասները: Ինչպես ցույց են տալիս փաստերը, Ն.Աղոնցը երբեք նպատակ չի ունեցել հատուկ զբաղվելու Ուրարտուի պատմության ուսումնասիրությամբ եւ այս չպետք է դիտել նշված պարագծում: Նրա կյանքի մեծ ու վե՛ նպատակն է եղել ստեղծել «Հայոց քննական պատմության» մի բազմահատոր աշխատություն, որը բոլոր առումներով կընդգրկվեր հայագիտական գրականության մեջ եւ կհամապատասխաներ եվրոպական չափանիշներին՝ օտարներին ներկայացնելով հայ ժողովրդի գիտական անաչառ պատմության լուսաբանումը: Համընդհանուր հայոց պատմության գիրք ստեղծելու գաղափարն Աղոնցը մտածել էր դեռ 1920-ական թթ. վերջերին, երբ Փարիզում գործող Սանասարյան ժողովրդական համալսարանի ուսանողների համար վարում էր «Հայոց պատմություն» դասընթացը: Տարիների ընթացքում դասընթացի նյութերն սկսում էր դասակարգել եւ ենթարկել ընդհանուր համակարգի, թե՛ «Հայոց պատմության» ստեղծման աշխատանքները կանոնավոր ու հետեւողական ընթացքի մեջ դնելու ուղղությամբ որքան գործնական քայլ չի ձեռնարկում: Հայոց պատմությունը շարադրելու Ն.Աղոնցի ծրագիրը հավանության արժանացավ Մելքոնյան հրատարակչական ֆոնդի արտասահմանյան հանձնարարի կողմից. «Հանձնաժողովը միաձայն որոշեց տպագրել հայոց հնագույն պատմության վերաբերյալ պրոֆ. Ն.Աղոնցի աշխատությունը», որը պետք է կազմեր «Հայ ժողովրդի պատմության» բազմահատրյակի առաջին հատորը:

Ն.Աղոնցի առաջարկվեց միաժամանակ կազմակերպել ֆրանսերեն բազմահատրյակի հայերեն թարգմանության հարցը: 1938թ. նա հրատարակել է 11 անուն ուսումնասիրություն, որից վեցը ֆրանսերենով, այդ թվում՝ «Սանտեղ հայր բուլղարների թագավոր» մեծագրությունը, նա 1939թ. ընդամենը երկու հոդված, իսկ 1940 եւ 1941 թթ. եւ ոչ մեկը: Անգամ մերժել է «Հայրենիք» ամսագրի՝ «Սասունցի Դավիթ» էպոսի 1000-ամյակի առթիվ հատուկ հոդված գրելու առաջարկը: Նա նախաձեռնեց Հայաստանի քննական պատմության «ամենից դժվար մասը»՝ Հայաստանի հին պատմությունը: Աշխատության առաջին հատորի մեքենագիր օրինակը պատրաստ էր, երբ 1942թ. հունվարի 27-ին Ն.Աղոնցը կնքեց իր մահկանացուն: Միայն նրա մահից հետո՝ 1946թ. կեսերին հրատարակվեց «Հայոց քննական պատմության» առաջին մասը, որը կրում էր «Հայաստանի պատմության ակունքները» խորագիրը: Աշխատանքը ավարտվում է «Ուրարտուի վախճանը եւ նրա պատմական դերը» եզրահանգլից հատվածով, որին Զ.Ջավդյանը որպես հավելված ավելացրել է Ն. Աղոնցի «Հայերի ծագումը» անավարտ ուսումնասիրությունը, ինչպես նաեւ ամբողջական տեսք ունեցող «Ասորական արշավանքների ուրարտուի դեմ», «Հայաստանը Բ.ա. IV-I դարերում», «Կրատուն ընդդեմ պարթեների/ըստ սկզբնաղբյուրների/», «Հայաստանը իռանական պարթեական հակամարտության ոլորտում Բ.ա. IV դ. III դարի սկիզբ» եւ «Բյուզանդա-պարսկական հարաբերություններն ու Հայաստանը IV դարի վերջից-VI դարի կես, թարգմանեց՝ Օ.Վարդապարյանը»:

Ն.Աղոնցի Ե հատորն ամփոփում է նրա բյուզանդագիտական ժառանգությունը: Համաշխարհային գիտական հանրությունը Ն.Աղոնցին ճանաչում է որպես շնորհաշատ բյուզանդագետ: Զբաղվելով հայրենի պատմությամբ՝ նա գրեթե միշտ աչ-



քն առաջ է ունեցել բյուզանդական աղբյուրները: Ավելի ստույգ ասած՝ նա անընդհատ փնտրում էր միաժամանակ եւ «Բյուզանդիան»՝ Հայաստանում եւ «Հայաստանը»՝ Բյուզանդիայում»՝ քաջ գիտակցելով, թե որքան միաշունչված էին նրանց ճակատագրերը: Ն.Աղոնցն առաջին հայ բյուզանդագետն էր: Մինչ նրա ասարեք գալը հայ պատմագիտությունը միայն հպանցիկ աղբյուրներ է ունեցել բյուզանդագիտության հետ: Առանձին հարցեր քննարկման նյութ են դարձել հայ ժողովրդի ընդհանուր պատմությանը նվիրված ուսումնասիրություններում / Մ.Զամյան, Սո.Պալասանյան եւ այլն/, սակայն չկար մեկը, ով պատշաճ մասնագիտական պատրաստվածություն ունենար եւ ճանաչված լիներ միջազգային գիտական համայնության կողմից: Երկրորդն այն է, որ Ն.Աղոնցն անուն էր ամենայն հնարավորը՝ հանդգնելու բյուզանդագետների հետնորդներին այն, որ Բյուզանդիայի վերաբերյալ հայկական աղբյուրները ոչ պակաս արժանի են ուշադրության, քան «դասական» եվրոպական կամ արեւելյան լեզուներով գրվածները, երբեմն նույնիսկ նախընտրելի են: Շեշտելով Ն.Աղոնցի՝ բյուզանդագիտությանը բերած այս նորությունը՝ Ժ.Գարիտը գրում է. «Անհար է ձեռնամուխ լինել եզրագրության, Ասորիքի, Հայաստանի կամ Վրաստանի միջնադարյան պատմության ուսումնասիրության առանց հիմնվելու բյուզանդական աղբյուրների վրա: Նմանապես անհար է շարադրել Բյուզանդիայի պատմությունն առանց հաշվի առնելու դպտիական, ասորական, հայկական եւ վրացական աղբյուրները: Ահա թե ինչու Ն.Աղոնցը լայնորեն

օգտագործում էր հայկական պատմիչներին, որոնց երկասիրությունների բնագրերը բյուզանդագետներից քչերն են ի վիճակի կարդալ»: Հատորում լույս տեսած 24 ուսումնասիրությունից 22-ը մայր հայրենիքում լույս են տեսնում առաջին անգամ: Հատորում տեղ են գտել ոչ միայն Լիսաբոնում լույս տեսած՝ պատմաբանի բյուզանդագիտական ժառանգությունն ամփոփող ժողովածուի 18 ուսումնասիրությունը, ինչպես նաեւ «Կասիա Միանձնուհին եւ հայերը» եւ «Հայ գիտական դեմքերը Բյուզանդիայում» երկասիրությունները: Հատորի հավելվածում անհրաժեշտ է համարվել տեղադրել «Լազիկա եւ Բյուզանդիա» արխիվային չտպագրված նյութը եւ Ա.Գրեգորիի եւ Ն.Աղոնցի հեղինակությամբ լույս տեսած «Նիկեոսի-Ծուռվիզ» հետաքրքրական հոդվածը:

Աղոնցի երկերի Զ հատորը համարյա ամբողջությամբ ամփոփում է հրատարակարտության բնագավառում կատարած աշխատանքները: Այստեղ զետեղված 32 նյութից միայն 16-ն էին նախապես լույս տեսել «Հայկական հարց» ժողովածուում /1996/, որը տպագրության էր պատրաստել Պ.Զովհաննիսյանը, մյուսները հրատարակվում են առաջին անգամ, մի քանիսն էլ թարգմանություններ են ռուսերենից: Այդ աշխատանքները ստեղծվել են կոնկրետ միջավայրում պատմական այս կամ այն իրադարձությունների լույսի ներքո: Լինելով գործուն անհատ՝ նա անմիջականորեն մասնակցել է հայկական հարցի քննարկումներին կամ պատմական որքան դեպքի մասնակցի է եւ այդ ամենը գրի է առել իր «Հայկական հարցի շուրջ Թուրքիայում», «Հայկական հարցը Սեւում»,

«Հայաստանի սահմանների խնդիրը» եւ այլ արժեքավոր ուսումնասիրություններում, որոնք էլ ամփոփված են այս հատորում: Վերլուծելով պատմական իրադարձությունները՝ նա կայացնում է կոնկրետ եզրահանգումներ: Այսպիսով, ամփոփելով վերը նշվածը՝ կարելի է եզրակացնել, որ Պ.Զովհաննիսյանը հրատարակելով Ն.Աղոնցի հատորները՝ կատարել է դրվատանքի եւ խրախուսման արժանի գործ, որի անհրաժեշտությունը զգում էր ժամանակակից գիտական սերունդը:

Ծանոթագրություն

1. Տե՛ս Նիկողայոս Աղոնց, Երկեր վեց հատորով, հատ. Ա./Պատմագիտական ուսումնասիրություններ/, Երեւան, 2006, 652 էջ: Հատ. Բ./Պատմա-բանասիրական ուսումնասիրություններ/, Երեւան, 2006, 608 էջ: Հատ. Գ./Հայրենագիտական ուսումնասիրություններ/, Երեւան, 2008, 688 էջ: Հատ. Դ./Թեմական պատմություն հայոց/, Երեւան, 2009, 720 էջ: Հատ. Ե./Հայ-բյուզանդական ուսումնասիրություններ/, Երեւան, 2012, 620 էջ: Հատ. Զ./Հրատարակարտության, Երեւան, 2012, 540 էջ:
2. Տե՛ս Նիկողայոս Աղոնց, Երկեր Ա. Պատմագիտական ուսումնասիրություններ, Երեւան, 2006, էջ 7:
3. Նիկողայոս Աղոնց, Երկեր, հ. Ա, Երեւան, 2006, էջ 498:
4. Տե՛ս նույն տեղում, էջ 534:
5. Նիկողայոս Աղոնց, Երկեր, Բ, Երեւան, 2006, էջ 5:
6. Տե՛ս Նիկողայոս Աղոնց, Երկեր, հ. Գ., Երեւան, 2008թ., էջ VI:
7. Նույն տեղում:

Ճձ ԿՕԷՍԶՍ

Փոխադարձ սիրո առկայություն...

Հարցազրույց երկարամյա մանկավարժի հետ՝ ծննդյան 60-ամյակի կապակցությամբ

Շուրջ 35 տարի է, ինչ մանկավարժ Անահիտ Մելքունյանն աշխատում է Գորիսի Յու.Բախչյանի անվան N3 հիմնական դպրոցում՝ դասվար:

Բազմաթիվ են լավագույն զնահատակամեներն ուսուցչուհու մանկավարժական կյանքում՝ դպրոցի տնօրինության, քաղաքի եւ մարզի ղեկավարության կողմից: Հավաստագրեր, վկայագրեր՝ Կրթության ազգային ինստիտուտի վերապատրաստման դասընթացներն ավարտելու, ատեստավորվելու, մեթոդիկավորման կողմից դասալսումների, փորձի փոխանակման հիշարժան արդյունքների, բարձր առաջադիմություն ապահովելու մասին: Անցած տարի ուսուցչուհին երկարամյա անբասիր աշխատանքի, մատաղ սերնդի կրթության եւ դաստիարակության գործում ունեցած ավանդի համար ՀՀ Սյունիքի մարզպետ Սուրեն Խաչատրյանի կողմից պարգևատրվեց շնորհակալագրով:

«Անահիտ Մելքունյանը մեր ամենավարժաբան դասավարդներից է: Տարիները նրա մեջ ոչ միայն չեն խուճացել, այլև՝ ավելի վառ, հասուն են դարձրել իսկական մանկավարժին բնորոշ հատկանիշները. պատասխանատվություն յուրաքանչյուր դասի, աշակերտի հանդեպ, պարտաճանաչություն, հետևողականություն, ինքնակատարելագործում եւ սկզբունքայնություն: Լիարժեք տիրապետում է ոչ միայն դասավանդած առարկաներին, նաեւ՝ ուսուցման մեթոդներին: Մեր երիտասարդ մանկավարժները շատ բան ունեն սովորելու երկարամյա ուսուցչուհուց», - ասում է դպրոցի տնօրեն Կարմեն Կարապետյանը:

– **Տիկին Մելքունյան, տարիների ընթացքում, բնականաբար, շատ սերունդներ եք կրթել ու դաստիարակել: Բազմաթիվ են բարի խոսքերն ու զնահատակամեները Ձեր մասին՝ որպես մանկավարժի, մարդու եւ մտավորականի: Ի՞նչ է Ձեզ համար մանկավարժությունը, եւ առաջին անգամ ինչպե՞ս ծնվեց մանկավարժ դառնալու գաղափարը:**

– Նախ՝ շնորհակալություն՝ բոլոր բարի խոսքերի համար: Ասեմ, որ մանկավարժությունը, հավանաբար, փոխանցվել է ինձ գեներով: Ծնողներն ուսուցանեցին եղել են մանկավարժ, մենք՝ երեխաներով, գրեթե բոլորս, ընտրել ենք այդ մասնագիտությունը: Մայրս՝ Տեղ գյուղի վաստակաշատ մանկավարժ Լուսինի Բարխուդարյանը, հիշում եմ, մինչեւ ուշ գիշեր ստուգում էր աշակերտների գրավոր աշխատանքը: Նա միշտ քայլում էր՝ տետրերի տրցակը թելի տակ: Ես սիրով ու հիացմունքով էի հետետում գրչի նրա շարժումներին, ինքնամոռաց աշխատանքին: Մի օր ուղղակի խնդրեցի՝ թույլատրել ինձ ստուգել տետրերը: Ես ինքս դեռ սովորում էի դպրոցում: Ի գարմանս ինձ՝ մայրս վստահեց՝ մի պայմանով. ես պետք է չորս դույլ ջուր տանեի եւ ջրեի մարզերը...

Այդ օրը ես հաստատապես որոշեցի ուսուցչի դառնալ: Թեպետ, կարծում եմ, որոշումն իմ արյան ու հոգու մեջ էր... իմ ծննդից առաջ...

Մանկավարժությունն ինձ համար իմ ողջ կյանքն է, առանց որի ոչինչ իմաստ չէր ունենա:

– **Ասում են՝ երեխայի գիտակցությունը մաքուր գրատախտակ է,**

եւ ամեն ինչ կախված է նրանից, թե ինչ կգրի այնտեղ ուսուցանողը: Ի՞նչ կասեիք ուսուցչի պատասխանատու դերի, նրա կիրառած մանկավարժական մեթոդների մասին, եթե հաշվի առնենք, որ 21-րդ դարի երեխան դպրոց է մտնում փոքր-ինչ ավելի սոցիալապես պատրաստված, տեղեկացված, հաճախ էլ՝ ոչ թե քարկտիկ, պախկվոցի կամ յոթբարձուցի խաղերի քուրայով անցած, այլ՝ համակարգչային ակտիվ խաղերի մեջ հմտացած, առանց մանկության վարդագույն ակնոցների...

– Այդ մեկ հարցն ամփոփում է վերջին 10-15 տարվա՝ մանկավարժներիս ողջ գործունեության հրատապ ծրագիրը, մտահոգությունը, խնդիրները, առօրյան առիտարակ: Սկսեմ նրանից, որ 35 տարի չփվելով 7-ից 10 տարեկան աշակերտների հետ, ինձ համար կարեւոր հայտնությունն են արել, բոլոր ժամանակներում էլ երեխան մնում է նույնը, եւ դասվարը չպետք է մոռանա, որ իր դիմաց կանգնած է յոթամյա մանուկ կամ աղջնակ, որի համար աշխարհը նոր է սկսվում: Սա որպես նախնական ծրագիր, այնուհետ՝ գալիս են բոլոր մյուս հարցերը, որոնք բխել են սոցիալական շերտավորումներից, ընտանեկան հանգամանքներից, թելադրող շրջապատի պայմաններից, ի վերջո, դարի հոգեբանությունից, երեխայի գիտակցության վրա, արդեն իսկ, այս կամ այն անդրադարձն ունեցած իրավիճակներից: Փաստը մնում է այն, որ ուսուցչի ձեռքում է առաջին դասարան, եւ միանգամից հույսով ու հավատով, նաեւ, բոլոր ժամանակների երկյուղածությամբ, անորոշ-թրթռում վայելու ու անհամբերությամբ իր վրա են հառնվում տասնյակ զույգ մաքուր, անապական աչիկներ, որոնք հետեւում կանգնած է եւ դարի ուրվականը, եւ՝ մի-մի կենցաղի մշակույթ, եւ ամենակարեւորը՝ մի-մի անհատականություն: Արդյունքում իսկավարը պետք է այնքան բանիմաց լինի, որ կարողանա հմուտ մանկավարժ պես նախապես այդ խուններում թռչնային մտքերի, դեռ մանկական նուրբ, տարբերությամբ զգացմունքների, աշխարհի ընկալած-չընկալած ճիշտ ու սխալների մեջ եւ գուշուրեմ, ամենակերպով օգտագործելով, կարողանա ամրապնդել ուրվագծերի, գծերի, մեթոդային տարբերակայնույթի, մեթոդները, թվագրությունը, յուրաքանչյուր առարկայի պոեզիան, բարոյականությունը... Իրոք, մեծ է դասվարի պատասխանատվությունը, բայց եթե մանկավարժը կարողանում է ճիշտ օգտվել ուսուցման ավանդական մեթոդներից, ստանդարտ է նաեւ հոգեբանի, ծնողի դեր, ապա ավելի դյուրին է ընթանում ուսուցչի մատուցած գիտելիքի, կիրառած դաստիարակչական մեթոդների յուրացումն աշակերտի կողմից, որի միտքը, գիտակցությունը, իրոք, սպիտակ գրատախտակ է:

Կարեւոր է տարրական դասարանի աշակերտի նախնական ուսուցման, դաստիարակության գործում մուլտի-մանկապարտեզի դերը: Չափազանց մեծ է տարբերությունը մանկական հաստատությունն հաճախած եւ չհաճախած աշակերտների միջեւ: Սովորաբար առաջիններն ավելի հեշտ են ընկալում, ավելի գիտակ են կարգ ու կանոնին: Երկու դեպքում էլ դասվարը գործ է ունենում տարբեր անհատականու-



թյունների հետ եւ պետք է նրանցից յուրաքանչյուրին վերաբերվի ուսուցման եւ դաստիարակության յուրովի մեթոդներով: Այն, որ 21-րդ դարի աշակերտն այսօր կախվածություն ունի համակարգչից, բջջային հեռախոսից, փաստ է, եւ չենք կարող անտեսել այդ: Չգիտեմ էլ՝ դարի ընթացած տեխնիկական նորամուծությունները պարզե՞լ, թե՛ չարիք համարեմ, բայց որ դրանք շատ տխուր են անդրադառնում աշակերտի հոգեբանության, կարողացվածության, ճիշտ չօգտագործելու դեպքում՝ ընդհանուր գրագիտության վրա, դա հարյուր տոկոսանոց ճշմարտություն է: Այդքան երկար ժամանակ համակարգչի առջեւ նստելու եւ խաղեր խաղալու փոխարեն նրանք կարող են հինգ հեքիաթ ավելի կարդալ: Օրեցօր շատ ծնողներ են սկսում բողոքել, որ իրենց երեխային չեն կարողանում կտրել համակարգչից: Քանի որ համակարգչային այնպիսի համաձուլորակային գերխնդիր է (այն, իրոք, ախտ է, հիվանդությունավարակ, եթե ճիշտ տարիքում եւ ճիշտ նպատակով չի օգտագործվում), մնում է, ամեն պատեհ-անպատեհ առիթով, ծնողներին խորհուրդ տալ տարրական դասարանի երեխային միայն սահմանափակ ժամանակով թույլատրել մոտենալ համակարգչին եւ ուշադիր հետեւել նրա դիտած նյութերը, խաղերը, որովհետեւ ազդեցիկ առաջացնող յուրաքանչյուր խաղ (ծեծ, մարդասպանություն, արյան հեղեղ, բիրտ ուժի ցուցադրություն) մանկական հոգին ընդօրինակում եւ արծազանքում է, որն էլ ցավալիորեն խթանում է վաղ տարիքի դպրոցականի մարդկային կերպարը, բարոյական արժեքահամակարգը: Ուսուցչի ամենօրյա տքնաջան աշխատանքը պետք է համատեղված լինի ծնողի հետ՝ առանձին գրույցներով, քննարկումներով, հուզող հարցի լուծման եղանակների մշակումներով: Ես շատ հաճախ տեսնում եմ լինում իմ աշա-

կերտի կենցաղին վերաբերող ամենափոքր մանրուքին, ընտանեկան իրադարձություններին, անգամ՝ նրա համար նշանակալի այս կամ այն հագուստի ձեռքբերման պատմությունը: Ամենաշատը, որ կարող է որպես մանկավարժի եւ մոր, ինձ հուզել, երեխայի ընկճվածությունն է, որի դեմ ամեն գնով պայքարում եւ վերացնում եմ: Եվ ամենաշատը, որ կարող է ինձ ուրախացնել, երեխայի ուրախությունն է, երբ կարողանում է ճիշտ եւ վայելչազեղ գրել, ստանալ դասարտի կողմից աստղիկներ, պատասխանել դասը, նոր վերաբերվել կամ պարգայես՝ ուրախ տրամադրությամբ դասի գալ, որովհետեւ... հայրը վերադարձել է Ռուսաստանից... Դասվարը պետք է կարողանա երեխայի հետ նաեւ այդ ուրախությունը կիսել եւ ընդհանրապես՝ բոլոր ուրախությունները եւ անհաջողությունները, միաժամանակ, անընդհատ ջանա ամրապնդել այն տարրական գիտելիքները, որ ինքն է տալիս՝ օգտագործելով այն բոլոր մանկավարժական մեթոդները, սկսած ավանդականից (դիդակտիկ նյութեր, անհատական, խմբային աշխատանքներ, դաստիարակչական, ուսուցողական թերթերի, պատասխանների պատրաստում)՝ մինչեւ այսօրվա նորագույն մեթոդները՝ քառաբաժան, մտազորող, պրիզմա...

Այնքան շատ կուզեի, որ մեր երեխաները չենթարկվեին սոցիալական վարիվերումների, մեծամասին անհոգ մանկության մեջ, ստիպված չլինեին, ոչ իրենք, ոչ էլ նրանց ծնողները մեկնել կամ վերադառնալ, կտրվել հայրենի հողից ու արմատներից... Յուրաքանչյուր երեխա, ի վերջո, տաղանդավոր է յուրովի, եւ ուսուցչին մնում է միայն նրա սրտում վառել իմացության ցախը, գիտելիք տալ, բարոյական արժեքներ սերմանել: Մի՞թե ավելի մեծ երջանկություն կա մանկավարժի համար, քան այն, երբ տարիներ անց հանդիպում

է վաստակով ու բարի անունով արդեն կայացած իր աշակերտին, որը բժիշկ է, վարորդ կամ վարսահարդար, մանկավարժ կամ խոհարար: Հանդիպում եւ գրկախառնվում ենք, հուզվում, հիշում-վերապրում դպրոցական օրերը, այս կամ այն դեպքերը՝ հիշարժան կամ ոչ հիշարժան, ծիծաղելի, անգամ զավեշտ կամ սովորական... Օրինակ, մինչեւ հիմա ինձ զվարճացնում է մի դեպք, երբ առաջին դասարանցի աղջնակը դասի ժամին հանկարծ ինձ է մոտենում եւ լուրջ-լուրջ սանր խնդրում...

– **Ինչո՞ւ են Ձեր բոլոր սաները Ձեզ այդքան շատ սիրում, գաղտնիք...**

– Կարծում եմ՝ երեխան ամենաշատն է զգում, երբ իրեն սիրում են: Երեւի փոխադարձ սիրո առկայությունն է պատճառը: Գոհ եմ, հետեւում եմ իմ բոլոր սաների կյանքի հետագա ընթացքին. նրանցից ոչ մեկը վատ մարդ կամ հանցագործ չի դարձել, որի համար ստիպված լինեմ կարծել: Չէ՞ որ նրանք բոլորն էլ իմ երեխաներն են:

– **Տիկին Մելքունյան, Ձեր բոլոր սաները հետագայում արդյո՞ք, պարտադիր ընտրում են որեւէ բուհ: Չէ՞ որ այսօր, ասես, մոռա՞նք իրավունքի դիպում ունենալը՝ իմիջի, պատվախնդրության, ոմանք էլ՝ օժիտի հետ տանելու համար:**

